ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԾԻԱԾԱՆ

Բ. ԳԻՐՔ

ՔԵՐԱԿԱՆ - ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

Ե. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Սոյն գրքոյկը թարգմանեալ, հեղինակաւորեալ պատրաստեալ և ինքնուրոյն հրատարակեալ հրատարակչութեան իրաւունքը վերապահուած է։

Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ
1928

1930 (1)

I
692

491.99 B

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԾԻԱԾԱՆ

Բ. ԳԻՐՔ

ԿԻԼԻԿԻԱ ԳՐԱՏՈՒՆ
97 LEXINGTON AVE.
NEW YORK, N. Y.

ՔԵՐԱԿԱՆ - ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

Ե. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր թարգմանած, հեռեւողութեամբ պատրաստած և ինքնուրոյն հատուածներու արտատպութեան իրաւունքը վերապահուած է։

Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ
1928

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ «ՍԷԼԱՄԷՔ»
ԴԱՆԻԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
ՊԷՍ Հասուզ Թիւ 2, Ֆինճանճիլար Եօզուշու, Կ. Պոլիս

Ար
1-692ահ

ԾԻԱԾԱՆ

Բ. ԳԻՐՔ

1. — ԻՄ ԳԻՐՔՍ

Ըսէ՛, նայի՛նք.
Իմ սիրո՛ւն գիրք,
Ծոցդ աս ո՛րքան
Լաւ բաներ կան:

Հո՛ն է մուկը,
Ոսկի ձուկը,
Խաթուն կատուն,
Շնիկն արքուն
Գառնուկ, կով, եզ,
Պէսպէս բզէզ:

Ծաղիկ ու ծառ,
Ծիտն ու ծիծառ,
Հաւն ու ափլոր,
Խնձոր, սալոր,
Նաշխուն թիթեռ
Ու շատ բան դեռ . . . :

Ըսէ՛, պատմէ՛,
Թէ կը հաճիս,
Աղուոր բաներ
Իմ ականջիս։

Դէ՞հ, ըո՛ւտ պատմէ,
Իմ խելո՛ք գիրք,
Մատա՛ղ քեզի,
Խաղ, պար ու միրգ։

---

2. — ՕՐՈՒԱՆ ՊԱՀԵՐՆ ՈՒ ԺԱՄԵՐԸ

Մենք առաւօտն կ'արթննանք, կ'ելլենք, անկողինէն, կը հագուինք ու նախաճաշ կ'ընենք։

Կէսօրին կը ճաշենք։

Իրիկուան ընթրիք կ'ընենք։

Կէս գիշերին արդէն պառկած, քնացած կ'ըլլանք։

Յորեկը աշխատութեան պահն է. գիշերը՝ հանգիստի։

Յորեկը ու գիշերը կը կազմեն մէկ օր. Օրը քսան և չորս ժամ է։

—Ի՞նչ բան ցոյց կուտայ օրուան ժամերը և ի՞նչպէս։



3. — ԱՔԱՂԱՂ

Ըսէ՛ ինծի, ամաղաղ,
Ոսկի կատարիդ մատաղ,
Կարմիր մորուքիդ մատաղ,

Ինչո՞ւ կանուխ կ'արթնաս,
Բարձր ձայնով կը պոռաս,
Բակին դուռը կը թառիս:

ՀԱՆԵԼՈՒԿ 1. — Բան մը ունիմ, բան չէ,
Երկինքն ի վեր կը կանչէ.

---

4. — ՇՆՈՐՀԻԿՆ ՈՒ ՇՆԻԿԸ

Շնորհիկը պարտէզը նստած՝ դասը կը սերտէր։ Շնիկն ալ քիչ մը անդին երկնցել էր գետնին վրայ։

Շնորհիկ մէկէն գիրքը երկնցուց շնիկին ու ըսաւ.

— Կարդա՛ տեսնեմ, սիրո՛ւն շնիկս ի՞նչ գրուած է գրքին մէջ.

Շնիկը եկաւ, մօտեցաւ գրքին, հոտոտեց քանի մը անգամ ու հեռացաւ։

— Ի՞նչ կ'ընէ չունը, ի՞նչ է անոր գործը։

---

5. — ՓՈՔՐԻԿ ԴՊՐՈՑԱԿԱՆԸ

Տղայ մըն եմ դեռ շատ պզտիկ,
Բայց տունը չեմ ըներ տիտիկ.
Առեւն առտուն ցաթելուն պէս՝
Կ'երթամ շուտով մանկապարտէզ:

Հոն կը գրեմ ու կը կարդամ,
Նաեւ կ'երգեմ ու կը խաղամ.
Կը սորվիմ շատ բաներ աղուոր
Եւ գիտեմ գոց ոտանաւոր:

Տղայ մըն եմ դեռ շատ պզտիկ,
Բայց տունը չեմ ըներ տիտիկ:

---

6. — ԶԲԱՂԱԾ ՄԱՆՈՒԿՆԵՐ

Հայրիկը տուն եկաւ ու փնտռեց Երուանդն ու Արամը։ Ըսին թէ պարտէզն են։

— Ե՛րուանդ, ի՞նչ կ'ընես հոդ. ձայնեց հայրիկը։

— Ոչինչ պատասխան տուաւ Երուանդ.

— Դո՞ւն ի՞նչ կ'ընես, Արամ, պոռաց նորէն հայրիկը։

— Երուանդին կ'օգնեմ, ձայն տուաւ Արամ։

Ի՞նչ կ'ընէին Երուանդ ու Արամ։



7. — ՄԱՆԿԻԿԸ ԹՌՉՆԻԿԻՆ

Դուն թրռի՛ր, թուչնակ, ամէն առաւօտ
Պատուհանիս մօտ.

Գեղգեղէ քիչ մը զարթումէս առաջ
Ձայնով սիրաւաչ։
Թո՛ղ քու նիւնիւէդ աչքերս բանամ,
Նախ՝ դէմքս լրամ,
Եսքը՝ քեզի պէս երգովս առաջին
Փառք տամ Արարչին։

---

8. — ԾՈՅԼ ԽՈՐԷՆԸ

Խորէն պարապ կ'անցընէր ժամանակը ու բնաւ չէր սերտեր դասը։

— Խո՛րէն, դասդ սերտէ, ըսաւ մայրիկը։

— Գլուխս կը ցաւի կոր, ըսաւ Խորէն յօրանջելով, և տեղէն չերերաց։

Քանի մը վերջ մայրիկն ըսաւ.

— Խո՛րէն եկո՛ւր, հաց կեր։

— Խնձոր ալ կուտա՞ս, մայրիկ, ըսաւ Խորէն, ուրախութեամբ վազելով դէպի մօրը։

---

9. — ԾՈՅԼ ԱՂՋՆԱԿԸ

Գիրքն ի՛նչ ընեմ, կը պատռի,
Գրիչն ալ շուտ կը կոտրի,
Տիկնիկ ըլլար՝ խաղայի,
Կաղին ըլլար՝ աղայի
Հագուէի, շոուէի,
Փողոց, փողոց պտտէի:
Ուտէի, խմէի,
Մթնէր՝ քնէի:

ԱՌԱԾ. — Զուարթ բան, ոտքս գերեզման:



10. — ՆԱՇԽՈՒՆ ԹԻԹԵՌՆԻԿԸ

Զապել պարտէզին մէջ նաշխուն թիթեռնիկ մը տեսաւ վարդին վրայ թառած: Զապել կամացուկ մը մօտեցաւ թիթեռնիկին:

Անոր թեւերը ծիրանի գոտիի գոյներն ունէին, վրան ցանուած էր ոսկեփոշի:

Զապել հիացաւ մնաց և թիթեռնիկին չդպաւ:

— Դո՞ւք ինչ կ'ընէիք, տղաք. եթէ թիթեռնիկին դպչիք, ի՞նչ կ'ըլլայ:

---

11. — ԲԱՐԻ ԱՆԱՀԻՏԸ

Անահիտ բարի աղջիկ մըն էր, փողոցները չէր պտըտեր, չար տղոց հետ չէր խաղար: Ուշադրութեամբ իր դասերուն կ'աշխատէր:

Անահիտ շատ անգամ իրմէ պզտիկ Մերուժան եղբայրը կը պտոցնէր պարտէզին մէջ. միշտ կը հսկէր որ վտանգ մը չպատահի մանկիկին:

Իր այս ընթացքովը՝ Անահիտ սիրելի եղաւ ամէնուն:

---

12. — ԳՈՅՆԵՐԸ

Ձերմակ է ալիւրն ու ձիւնը,
Սեւ է ածուխն ու մելանը,
Ոսկին է փայլուն, դեղնորակ,
Կարմիր է գոգնոցս ու կըրակ.
Կանանչ է խոտը երբ թաց է,
Կապոյտ է երկինքն երբ բաց է.
Իսկ մանիշակը . . . ո՞հ, մոռցայ,
Ան ալ օրիորդս թո՛ղ ըսէ:

— Ի՞նչ գոյն ունի մանիշակը. իսկ նարինջը, մոխիրը, վա՞ղը:

---

13. — ՇԱԲԹՈՒԱՆ ՕՐԵՐԸ

Շաբաթ օր մըն էր: Տիրան ուրա՛խ, ուրախ տունին մէջ վեր վար կը ցատքրտէր ու կ'ըսէր:

Սիրական շաբաթ,
Հոգիս կիրակի,
Հոգէառ երկուշաբթի:

Մայրիկը լսեց ու ըսաւ:

— Տղա՛ս, ծոյլ տղոց խօսքեր են ատոնք: Շաբթուան բոլոր օրերն ալ սիրելի են: Գիտե՞ս շաբաթը քանի՞ օր է:

— Եօթն օր է, ըսաւ Տիրան:

— Իրաւ է: Գիտցիր նաև թէ երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ օրերը դպրոցի, աշխատութեան օրեր են. կիրակին հանգիստի, զբօսանքի օր է: Ո՛վ որ չաշխատիր, հանգիստ ընելու ալ իրաւունք չունի:

ԱՌԱԾ.— Ծոյլին ամէն օր կիրակի է:

ՀԱՆԵԻՈՒԿ 2.— Եօթն աղբար են, տարիքին մէկ է. անունին զատ զատ:

---

14. — ԱՐՓԻԻՆ ՊՈՒՊՐԻԿԸ

Իմ պուպրիկս ծնողասէր.
Ունի մազեր շէկ, սիրուն,

Մինչեւ մէջը երկար վարսեր
Խոպոպներով ոլորուն:

Ճերմակ, փայլուն նակտին տակ,
Աչուկներն են խաժուժիկ.
Վարդ բերանն ալ՝ կէս բաց, կէս փակ,
Կը ժրպտի միշտ գեղեցիկ:

Երիզներով կարմիր, լայն, լայն,
Լաթեր ունի զարդարուն.
Գիտէ՞ք, ինծի ո՞վ տուաւ զայն...
— Իմ մայրիկը սիրասուն:

---

15. — ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

Վահան հարցուց Աղաւնիին.

— Աղա՛ւնի, ձուկը մուկը մէկ տապակ, ո՞ւր կ'ուտես:

— Ձո՛ւկը կ'ուտեմ, պատասխանեց Աղաւնի:

— Ձուկին եղը մուկին կ'երթայ, մուկին եղը ձուկին կ'երթայ, ըսաւ Վահան ծիծաղելով:



16. — ՁԻԱԿ, ՁԻԱԿ

Ձի՛ակ, ձի՛ակ, գիս վազցուր,
Տա՛ր պարոնին դո՛ւռն անցուր.
Պարոնը փայտ է տաշեր,
Խաթունն հաւկիթ է խաշեր,
Ինձ ալ բաժին է պահեր,
Ոսկի սնտուկն է դրեր,
Ոսկի կատուն է կերեր:
Վա՜յ սա կատուն ծեծեցէք,
Վա՜յ, սա կատուն մի՛ ծեծէք,
Ոսկի թելով կախեցէք:

---

17. — ԱԿՆՈՑԸ

Փոքրիկ Գեղամ մամիկին քով վազեց ու ըսաւ.

— Մե՛ծ մայր, ակնոցդ քիչ մը ինծի կուտա՞ս:

— Ի՞նչ պիտի ընես, զաւակս, ըսաւ մեծ մայրը։

— Դուն կ'ըսես թէ ակնոցով լաւ կը տեսնես. տուր ակնոցդ, աչքիս դնեմ ու նայիմ թէ մաման ո՛ւր է դրեր շագանակը։

Որո՞նք կը գործածեն ակնոց. ի՞նչ կ'ընեն ակնոցով։

18. — Ո՞Վ, Ո՞Վ...

Գիշերները երբ քնանամ,
Ո՞վ կը հսկէ վրաս անմուն,
Ո՞վ կը ժպտի երբ կարթնանամ...:

Ո՞վ իմ վրաս կուտայ հոգի,

Սէրն հոգ, ցաւ ու նեղութիւն
Ինծի համար ո՞վ կը տանի...:

Դպրոցէն ալ երբ տուն դառնամ,
Ո՞վ ինձ կուտայ ափով լեցուն
Զամիչ, կաղին, նուշ քաղցրահամ...:

— Ո՞վ կ'ընէ այս բաները ձեզի համար, ան դեռ ուրիշ ինչէ՞ր կ'ընէ։

19. — ԽԵԼՈՒ ԳԼՈՒԽԸ

Բերանն ըսաւ. — Ես ամէն ինչ կ'ուտեմ, ու կը խմեմ։

Ձեռքն ըսաւ. — Ես ամէն ինչ կը շինեմ, կը քանդեմ։

Լեզուն ըսաւ. — Ես ամէն բան կ'ըսեմ, կը պատմեմ։

Ոտքն ըսաւ. — Ես ամէն տեղ կ'երթամ, մաման կուգամ։

Գլուխը մտիկ ըրաւ բերանին ու ձեռքին, լեզուին ու ոտքին ըսածները, և ծիծաղեցաւ։

Բերանն ու ձեռքը, լեզուն ու ոտքը միասին ըսին գլուխին. — Ինչո՞ւ կը ծիծաղիս։

Գլուխն ըսաւ. — Ի՛նչ որ ընէք, առանց ինծի պիտի հարցնէք, առանց ինծի բա՛ն մը չէք կրնար ընել։

Բերանը բաց մնաց. իսկ լեզուն կմկըմալով ըսաւ.

— Հա՛, իրաւ է, իրաւունք ունի գլուխը։

20. — ՀԱՅՐԻԿԸ

Շատ կը սիրեմ իմ հայրիկ.
Ամեն ատեն ինձ ինծի
Կ'ընէ շա՜տ, շա՜տ, շատ բարի։
Ի՞նչպէս պատմեմ ես ձեզի։

Ամա՛ռ կ'ըլլայ թէ ձմեռ
Ան կ'ափսոսի օրն ի բուն,
Հանգչիլն ի՞նչ է, չի գիտեր,
Զունի նաեւ երկար քուն։

Դեռ արեւը չցաթած՝
Կ'ելլէ, կ'երթայ իր գործին,
Տուն կը դառնայ երբ արդէն
Մութը կոխեր է գետին։

— Հայրիկը դեռ ուրիշ ինչե՞ր կ'ընէ ձեզի։
ԱՌԱՆ. — Հօր Տնակ, անուշ քնակ։

21. — ԳՐԻԳՈՐԻԿՆ ՈՒ ԿՈՎԵՐԸ

Գրիգորիկ առաջին անգամ գիւղ ելած էր։ Գիւղին քովէն գետակ մը կը հոսէր։

Գրիգորիկ գետակին եզերքը կը խաղար, երբ անդիէն կովեր եկան ջուր խմելու։

Գրիգորիկ տեսաւ որ կովերը ջուրը կը մտնեն։ Անմիջապէս տուն վազեց։

— Մա՛յրիկ, մա՛յրիկ, պոռաց Գրիգորիկ, կովերը պիտի թրջեն իրենց ոտքերը։

Լեռներ, ձորեր ձիւն է եկեր։
Իմ գառնուկիս հունն է եկեր։
Օրո՜ր, օրո՜ր, անընման,
Մայր մը չէ բերեր նման։
Խոտոր, ճերմակ լուսինկան
Յաթեր է օրրանիդ վրան։

---

25. — ՃՆՃՂՈՒԿԻՆ ԲՈՅՆԸ

Պարտէզը, ճիւղերու մէջտեղ, փոքրիկ ճնճղուկը բոյն մը շինեց։ Այդ բոյնին մէջ ածեց մանրիկ հաւկիթներ։

Ճնճղուկը երկար ատեն նստաւ հաւկիթներուն վրայ։ Վերջապէս օր մը երկու ծիտիկներ դուրս եկան անոնցմէ։

Ճնճղուկը ուրախ էր. կը ճռուողէր ու կը դառնար բոյնին շուրջ։ Ծիտիկները շար-

ժեցան, գլուխնին երերցուցին եւ ըսին ճնճղուկին.

— Ծի՛ւկ, ծի՛ւկ, ծի՛ւկ,
Անո՛ւշ մայրիկ,
Մեզ կը սիրե՞ս,
Բե՛ր մեզի կուտիկ։

ԱՌԱԾ. — ճնճղուկէն վախցողը կորեկ չի ցաներ։

---

26. — ՄԱՅՐԻԿԸ

Փոքրիկ Կորիւն, փողոցը՝ կորսնցուց մայրը։ Կորիւն սկսաւ լալ, կանչել՝ «մա՛յրիկ, մա՛յրիկ» ըսելով, բայց մայրիկը չկար։ Անցորդներ հաւաքուեցան Կորիւնին գլուխը և հարցուցին թէ ո՞վ է իր մայրը։

— Միթէ չէ՞ք գիտեր, իմ մայրիկս է ան։

— Ի՞նչ է անունը, հարցուցին անցորդները։

— Մայրիկ է անոր անունը, պատասխանեց Կորիւն և կը շարունակէր լալ։

— Ըսէք, մարդիկ ինչո՞վ կը ճանչցուին և իրարմէ կը զատուին։

---

27. — ԱՆՈՒՆՆԵՐ

Ես գիտեմ շատ անուններ,
Անուններ կարճ ու երկայն,
Սիրուն աղուոր անուններ
Մանչերու կամ աղջկան:
Մտի՛կ ըրէ՛ որ ըսեմ.
Խորէն, Սուրէն, Փառանձեմ,
Օնիկ, Գառնիկ, Շամիրամ,
Սիսակ, Գիսակ, Պերճ, Վահրամ,
Աբէլ, Զապէլ, Նազենիկ,
Եղուարդ, Նրուարդ, Սաթենիկ,
Պետրոս, Պօղոս, Առուսեակ,
Արամ, Գեղամ, Հրմայեակ,
Զաւէն, Արմէն, Սրբուհի,
Յակոբ, Մեսրոպ, Տիրուհի,
Մանիկ, Նունիկ, Վարդանոյշ,
Երուանդ, Հրաչեայ, Սիրանոյշ,
Արշակ, Յոլակ, Արմինէ,
Լեւոն, Երմոն, Հերմինէ,
Տիգրան, Միհրան, Հայկ, Գամէր,
Դեռ գիտեմ շա՜տ անուններ,
Անուններ կարճ եւ երկայն,
Մանչերու կամ աղջկան:

— Գտէ՛ք ուրիշ անուններ ալ և գրեցէ՛ք։

28. — ՓՈՔՐԻԿ ՍՈՒՐԷՆԸ

Երանիկ և Լուսիկ կը խաղային պարտէզին մէջ։ Փոքրիկ Սուրէնն ալ անոնց հետ միասին կը խաղար։

Մայրիկը երեւցաւ խոհանոցին դուռնէն և ըսաւ։

— Ո՞վ ինծի երեք հաւկիթ պիտի բերէ նպարավաճառէն։

— Ես կը բերեմ, ըսաւ Սուրէն, և վազելով գնաց, շուտ մը բերաւ հաւկիթները։

Քիչ վերջ մայրիկը նորէն երեւցաւ եւ ըսաւ.

— Ձեզմէ մէկը թո՛ղ քովս գայ։

— Ես շատ գործ ունիմ, ըսաւ Երանի՛կ, չուզելով թողուլ խաղը։

— Ես ալ, ըսաւ Լուսիկ։

— Դո՛ւն եկուր, Սո՛ւրէն, ըսաւ մայրիկը, ձեռքին մէջ բռնած անուշ բլիթ մը։

Սուրէն վազեց գնաց մայրիկին քով։

— Այդ աղջիկները շատ գործ ունին, աւելցուց մայրիկը, չեն կրնար այս անուշ բլիթն ուտել. ես զայն փոքրիկ Սուրէնիս կուտամ որ շատ գործ չունի և կրնայ մայրիկին օգնել։



29. — ՓԻՍԻԿ, ՓԻՍԻԿ

Փի՛սիկ, փիսիկ,
Խաթո՛ւն հարսիկ,
Թաթիկներով,
Ճանկիկներով
Գեսին նստած՝
Ի՞նչ կը կարդաս,
Մը՛ռ, մը՛ռ, մը՛ռ, մը՛ռ...:

30. — ԳԷՇ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Զարեհ պզտիկ տղայ մըն էր։ Շատ տղոց պէս ան ալ մատներովը քիթը կը խառնէր հակառակ մայրիկին խրատներուն։

Օր մը Զարեհ նոր ճերմակ հագուստ մը հագած էր։ Այնչափ ուրախ էր որ...։ Բայց չէր մոռցած դարձեալ իր աղտոտ սովորութիւնը. մատներովը միշտ քիթը կը խառնէր։ Ահա յանկարծ քիթը արիւնեցաւ մատին բացած վէրքերէն և Զարեհի ճերմակ, աղուոր զգեստը աղտոտեցաւ, լղոճեցաւ։

Զարեհ շատ լացաւ, բայց օգուտ չունէր։ Նոր հագուստին խերն անիծուած էր։

Ասիկա ա՛յնչափ ցաւ պատճառեց իրեն որ մէյ մըն ալ մատը քիթը չխօթեց։

31. — ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ես կ'երթամ մանկապարտէզ,
Հոն կը սորվիմ բաներ պէսպէս։
Սա մարմինիս փափուկ, փոքրիկ,
Ըսե՞մ ձեզի մասերն գողտրիկ.
Ահա վերը գլխիկս աղուոր,
Վարն ալ ոտքերս ձեւաւոր.
Հո՛ս է ճակատս ողորկ, փայլուն,
Հո՛ս՝ աչուկներս պճղլտուն.
Այս է քթիկս պճղլիկ,

Տակն ալ բեռանը կլորիկ.
Ահա՛ թուշերս՝ կարմիր խնձոր,
Ու շրթունքիս՝ նրուան կտոր.
Սա՛ է կզակիս թոմպուլիկ,
Տակն ալ վիզիս՝ քիչ մը հաստլիկ.
Տեսէ՛ք ունիմ զոյգ ականջներ
Որ կը լրսեն ամէն ձայներ.
Նաեւ երկու ձեռքեր բամպակ,
Մէկն աջ ձեռքս է, միւսն ալ է ձախ.
Եթէ ուզեմ՝ վեր կը վերցնեմ
Այսպէս՝ ծափ, ծափ ծափ կը զարնեմ:
Ես երթալով մանկապարտէզ
Կը սորվիմ շատ բաներ այսպէս:

— *Ըսէ՛ք դեռ մարմնի ուրիշ ի՞նչ մասեր գիտէք։*

ՀԱՆԵԼՈՒԿ 3.— Մէկը կանգնած կը խօսի,
Երկուքն ականջ կը դնեն,
Իսկ երկուքն ալ կը նային:



32. — ՎԵՐԷՆ ՈՒ ՎԱՐԷՆ

Աղուէսն, օր մը, բարձր աշտարակին գլուխն ելաւ և զարմանքով տեսաւ թէ վարը՝ ամբողջ քաղաքը իր ոտքերուն տակ տարածուած է. իսկ գետնի վրայ մարդիկը մրջիւնի պէս կ'երեւնան։ Աղուէսը ինքնիրեն ըսաւ.

— Իրաւ որ ես յիմար եմ եղեր. հիմա հասկցայ թէ մարդիկ ի՛նչ պզտիկ, ի՛նչ խեղճուկ են եղեր. ես ալ ա՛յնքան կը վախնայի անոնցմէ։

Այդ պահուն, հեռուն պզտիկ մանուկներ կանգնած՝ կը խաղային, երբոր յանկարծ աշտարակին գլուխը բան մը տեսնելով՝ ուզեցին գիտնալ թէ ի՞նչ է, և իրարու

հետ բաւական վիճելէ վերջ՝ վճիռ տուին թէ
ճանճ է...։

— Ո՞ր կարծիքը ճշմարիտ է, աղուէսո՞ն թէ մա-
նուկներունը։

33. — ԱՐՏՈՒՏԻԿ

Արտուտիկ,
Նախշուն տոտիկ,
Իջնեն կալեր
Գողտիկ մողտիկ.
Հընտրեն քարեր,

Ուտեն կուտիկ.
Կը ծղուրլան
Կլթիկ, կլթիկ։

— Կը ճանչնա՞ք արտոյտը, դեռ ուրիշ ի՞նչ թռչունները գիտէք. ըսէ՞ք։

34. — ԿՌՈՒԸՏՈՂ ՔՈՅՐԵՐ

Անն և Սիրարփի գեղեցիկ պուպրիկ մը ունէին վարդագոյն հագուստով, զոր իրենց թեւերուն վրայ կը պտտցընէին կարգաւ։

Օր մը Անն ուզեց որ պուպրիկին հետ միայն ի՛նք խաղայ։ Սիրարփի ալ ուզեց որ քիչ մը ալ իրեն տայ պուպրիկը։ Անն չտուաւ։ Երկու քոյրերը բարկացան իրարու դէմ։

Սիրարփի խլեց պուպրիկին ոտքերէն. Անն պինդ բռնեց գլուխը, և սկսան իրարու ձեռքէ քաշել խեղճ պուպրիկը։

Շատ չտեւեց, պուպրիկը երկու կտ
եղաւ, և երկու քոյրերը ինկան իրենց կը
նակին վրայ։ Անոնցին ձեռքը մնաց պուպ
րիկին գլուխը եւ Սիրարփիին ձեռքն ա
ոտքերը։

Շատ աշխատեցան որ պուպրիկին կը
տորները իրար բերեն և նորէն առաջի վիճա
կին վերածեն, բայց կարելի չեղաւ։ Այ
ատեն շատ զղջացին որ կռուրտեր են,
սկսան լալ պուպրիկին կտորներուն առջև։

35. — ՍԱԳԻԿ

Սա՛գիկ, սա՛գիկ, իմ սիրունիկ,
Քեզի կուտամ անուշ կուտիկ.
Որ դուն ուտես շուտ մը մեծնաս,
Ուրախ ապրիս, զուարճանաս:

Երբոր մեծնաս մեծ սագ դառնաս,
Ես կը խնդրեմ իմ մայրիկէս,
Որ ան ժողվէ քու փետուրիկ,
Ինծի համար շինէ բարձիկ:

Սա՛գիկ, սա՛գիկ, իմ սիրունիկ,
Ես քեզ կուտամ անուշ կուտիկ:

36. — ՆՈՐԱԾԻՆ ՊԵՏԻԿԸ

Մամիկն ամէն օր տաքուկ ջուրի մէջ կը
ոգցնէ նորածին փափուկ Պետիկ Թոռնիկը։
Պետիկ կուլայ, կը ճչէ, ինքնիրմէ մեծ ձայ-
ներ կը հանէ. մամիկը հոգ չըներ։

Երբոր լոգանքը կը վերջացնէ, մամիկը
կը հանէ ջուրէն Պետիկը, և նախ՝ կզակէն,
յետոյ՝ ոտքերէն բռնելով՝ կը կախէ, կը
թօթուէ մարմինը ու կ'ըսէ.

Երկան վգիկ,
Թօթուէ՛ ջրիկ,
Ժողվէ մսիկ։
Կամար ընքուի լինիս,
Երկայն թարթիչ լինիս,
Շահէն աչուի լինիս,
Նուշիկ քթիկ լինիս,
Պզտիկ բերան լինիս։

Պետիկ կամաց կամաց պիտի մեծնայ
ու գեղեցիկ մանչ մը պիտի ըլլայ, մեծ մօրն
ուզածին պէս։

— Մամիկն ինչպէս կ'ուզէր որ ըլլար Թոռնիկը։

37. — ԱՍՏՂԻԿԻՆ ԵՐԱԶԸ

Փոքրիկ Աստղիկ գիշերը երազ էր տեսեր։ Առտուն արթնցաւ և սկսաւ պատմել մայրիկին։

— Մա՛յրիկ, վերի սենեակին պատուհանէն կը նայէի, հեռուն քեզ տեսայ որ հօրեղբօրս պարտէզին մէջ կը պտտէիր. մա՛յրիկ, մա՛յրիկ, պոռացի, և սկսայ թռչիլ օդին մէջ. ի՜նչ աղուոր է թռչիլը... թռայ... թռայ... քովդ հասայ. ինծի նայէ, մա՛յր, ըսի ու...։

Եւ Աստղիկ սկսաւ մտմտալ։

— Յետոյ ի՞նչ պատահեցաւ, ըսաւ մայրիկը։

— Ի՜նչ գիտնամ, միտքս չէ, դուն ըսէ, մա՛յրիկ, վերջը ի՞նչ եղաւ։

— Ես ի՞նչպէս գիտնամ քու երազդ։

— Բայց չէ՞ որ դուն ալ այդտեղ էիր մա՛յրիկ...։

— Դուք ալ երազ կը տեսնէ՞ք, ի՞նչ երազներ։

38. — ՊԱՌԱՒԻՆ ՀԱՒԸ

Պառաւին հաւը ամէն օր մէյմէկ հաւկիթ կ'ածէր։ Պառաւը ագահ էր, մտածեց և հնքնիրեն ըսաւ։

— Եթէ հաւուս շատ կուտ տամ, պէտք է որ օրը մէկ հաւկիթէն աւելի ածէ։

Եւ սկսաւ հաւուն շատ կեր տալ։

Հաւը կերաւ, կերաւ, գիրացաւ ու ածէ կտրեցաւ։

ԱՌԱԾ.— Աշան հաւը կրկռան կ'ըլլայ։

ՀԱՆԵԼՈՒԿ 4.— Տնակ մը կայ, դուռ չունի.
Վրան արծաթ, մէջն ոսկի։

39. — ՈՒԼԻԿՆԵՐ

Իմ ուլի՛կներ, փոքր այծո՛ւկներ,
Դէ՜հ, շարժեցէ՛ք, բացէ՛ք դուռներ.

Ահա՛ կուգամ կանանչ դաշտէն,
Անուշ խոտերն արածելէն,
Ջուրն եմ խմեր պաղ աղբիւրի,
Ծիծերս առաս կաթով են լի.
Ձեզի կ՚ըսեմ, բացէ՛ք, բացէ՛ք,
Որ ծիծերուս կաթը ծրծէք:

---

40. — ԹԱՓԹՓԱԾ ՅԱԿՈԲԸ

Յակոբ ծոյլ տղայ չէր, բայց կարգ կա
նոն չէր գիտեր։ Իրիկուան, դասերը լմնցը
նելէ յետոյ, գիրքերն ու տետրակները ա
ղին անդին ցրուած կը թողուր։ Առաւ
ալ անկողինէն ելլելուն պէս, հագուստները
կ՚սկսէր փնտռել։ Գուլպային մէկը աթոռի
վրայ էր, միւսը՝ աթոռին տակ, կօշիկի
մէկը անկողնին ներքեւ էր, միւսը սանդու
ղին վրայ։

Յակոբ այսպէս ամէն առտու ուշ կ
մնար հագուելու ու դպրոց երթալու։ Ի
ուսուցիչներէն շատ յանդիմանութիւն կ
լսէր։

— Ի՞նչպէս պէտք է ընէ կոկիկ տղայ մը։

---

41. — ԿՈԿԻԿ ՆՈՒԱՐԴԸ

Նրւարդն է ան, մեր փոքրիկ,
Միշտ վայելուչ, միշտ կոկիկ,
Ահա՛ կ՚երթայ ան դպրոց,
Լաւ սրված իր դասն ու գոց:

Նրւարդն է ան, մեր Նրւարդ,
Կոկիկ, մաքուր ու զրւարթ:

Տեսէ՛ք հագուստն իր աղուոր,
Կօշիկներն ալ՝ փայլուն, նոր,
Եւ գոգնոցն ու պարեգօտ
Որ չէ աղտոտ կամ ծալոտ:

Նրւարդն է ան, մեր Նրւարդ,
Կոկիկ, մաքուր ու զրւարթ:

Ձեռք ու երես լրւացուած,
Մազերն ալ լաւ սանտրրւած,
Անա՛նկ սիրուն է ան որ
Ձինք կը շոյեն ամէն օր:

Նրւարդն է ան, մեր Նրւարդ,
Կոկիկ մաքուր ու զրւարթ:

---

42. — ՔԱՋ ԵՂՋԵՐՈՒՆ

Օր մը եղջերուն ծիծաղեցաւ իր քրոջը եղնիկին վրայ ու ըսաւ։

— Դուն շատ վախկոտ ես, սիրելի՛ քու-րիկ, հովի մը ձայնը, տերեւի մը խշրտոցը կամ գայլի մը ոռնումը լսես թէ չէ, գլուխդ առած լեղապատառ կը փախչիս։

Այդ պահուն յանկարծ շան հաջիւնի ձայն մը լսուեցաւ։

— Վա՜յ որսորդներն եկան, կանչեց մեր քաջ եղջերուն, ու բոլոր ուժովը վազեց քրոջը ետեւէն։

43. — ՄԵՐ ՏԱՆ ԵՏԵՒ

Մեր տան ետեւ խորունկ ձոր,
Ջիւն կուգայ մորմոր, մորմոր.
Ջիւն ուշեմ բարձրիկ սարէն,
Ջուր խմեմ մորմոր քարէն։

Կէս գիշերին դուրս ելայ,
Սեւ ամպն անուշ կը ցոլայ,
Կը ցոլայ բարձրիկ սարէն,
Ջուր խմեմ մորմոր քարէն։

44. — ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Աղքատիկ մայր մը իր փոքրիկ մանչը գրկած՝ գուրգուրանքով կը սիրէր։ Անցորդ մը հարցուց անոր։

— Զաւկիդ ո՞ր բանը ամէնէն աւելի կը սիրես։

Մայրը քիչ մը մտածեց. յետոյ ըսաւ.

— Ինչ որ իր վրայ ամէնէն աւելի կը սիրեմ, այն է որ երբե՛ք անգամ մը իսկ սուտ խօսած չէ։

Տղա՛ք սուտ մի՛ խօսիք, անկե՛ղծ եղէք, անկեղծութիւնը ձեր ամէնէն ընտիր յատկութիւնն է։

— Դուք սուտ կը խօսի՞ք արդեօք...։

ՍՈՒՏ. — Ստախօսին տունն է այրեր, մէկը չէ հաւատացեր։

---

45. — ՊԶՏԻԿ ՁԱՐԱՃՃԻՆ

Է՞ն, ի՛նչ ընեմ ձեռս չէ,
Խելօք նստիլ ու կարդալ.
Քիչ մը խօսիլ ու խնդալ
Կարծեմ սակայն գէշ բան չէ։

Լո՞ւռ, զանգակը կը զարնէ,
Պէտք է նստիլ, աշխատիլ,
Օրիորդը հո՛ն կեցեր է,
Պէտք չէ խնդալ ու խօսիլ,

Կը պատժեն զիս, կը սաստեն,
Խօսիլը լաւ չէ՝ կ'ըսեն.
Բայց ի՛նչ ընեմ, ներեցէ՛ք,
Լուռ նստիլը ձեռս չէ։



46. — ՊԱՐՏԷԶԻՆ ՄԷՋ

Փոքրիկ Գեղամն ու քուրիկը՝ Զարմինէն միասին պարտէզ իջան։ Այնտեղ կային կապոյտ սմբուլներ, հոտաւէտ մանիշակներ, կարմիր կարմիր վարդեր; ճերմակ ճերմակ շուշաններ և ուրիշ շատ սիրուն ծաղիկներ։

Գեղամ ու Զարմինէ ուրախ զուարթ քաղեցին այդ ծաղիկներէն ու գեղեցիկ փունջեր կապեցին։

Այդ պահուն անոնք տեսան որ պարտիզպանը մէկիկ մէկիկ կ'երերցնէ պարտէզին ծառերը և անոնց վրայէն շատ թրթուրներ ու բզէզներ վար կը թափին։

— Ինչո՞ւ ատոնք վար կը թափես, հարցուց Գեղամ պարտիզպանին։

Ան ալ ըսաւ.

— Եթէ թրթուրներն ու բզէզները ծառերու վրայ մնան, տերեւներն ու պտուղները կ'ուտեն, այն ատեն դուք ո՛չ տունկ կ'ունենաք, ո՛չ խնձոր, ո՛չ ծիրան, ո՛չ ալ ուրիշ պտուղներ։

Մէ՛յմնալ Զարմինէ պզտիկ ծառի մը վրայ տեսաւ շատ գեղեցիկ թռչուն մը։ Կամացուկ մը մօտեցաւ ծառին եւ ուժով մը թօթուեց։ Բայց թռչունը վար չինկաւ։

Ի՞նչ եղաւ թռչնիկը, եթէ վար չինկաւ։

---

47. — ՊՈՒՊԼԱՏԻԿԻՆԸ (անձրեւաբեր)

Պուպլատիկինն եկեր է,
Շարէ շապիկ հագեր է,
Փեթկին ետեւ կանգներ է.
Կարմիր կովէն եղ կ'ուզէ,
Ճերմակ ծովէն ջուր կ'ուզէ,
Սեւ հաւէն հաւկիթ կ'ուզէ,
Փեթկին մէջէն մեղր կ'ուզէ։
Պուպլատիկինն եկեր է...։

---

48. — ԱՌԻԾՆ ՈՒ ԳՈՐՏԸ

Առիւծը գորտին կրկռալը լսեց ու ինք իրեն ըսաւ.

— Սա գոռացողը մեծ գազան մը ըլլալու է։

Այս խօսքերը ըսելու ատեն մէյմն ալ նայիս գորտը ճահիճէն դուրս ելաւ։ Առիւծն խսկոյն իր ուժեղ թաթը զարնելով՝ ճզմեց զայն։

— Ասկէ ետք՝ մինչև որ չտեսնեմ, չպիտի դատեմ, ըսաւ ինքնիրեն։

---

49. — ԲՈՒՍԻԿԸ

Սերմին մէջ պահուած
Բոյս մը կայ սիրուն,
Հոն հանգիստ պառկած
Կը քաշէ խոր քուն։

Արքնցի՛ր ըսին,
Շողերն արեւին,
Արքնցի՛ր, ըսին,
Շիթերն անձրեւին :

Բուսիկն ալ իրաւ,
Քունէն արթնցաւ,
—Անձրեւ ու արեւ,
Ըսաւ ձեզ բարեւ :

— Սերմը ծլելէն վերջ ի՞նչպէս կը մեծնայ։

50. — ԱՌՏՈՒԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ

Արեւն իր կորիկ, պայծառ դէմքը դուրս հանեց լեռներուն ետեւէն և սկսաւ ամէն կողմ ղրկել իր ոսկեփայլ ճառագայթները։

Առաջին ճառագայթը սուրաց և ինկաւ արտոյտին վրայ։ Արտոյտը թեւերը շարժակեց, դուրս թռաւ բոյնէն, արագ արագ բարձրացաւ և երգեց իր առտուան գեղեցիկ երգը։

Երկրորդ ճառագայթը հանդիպեցաւ նապաստակին։ Շուտով նապաստակը շարժեց ականջները և զուարթօրէն սկսաւ ցատկռտել ցօղաթուրմ մարգագետիններուն վրայ։

Երրորդ ճառագայթը մտաւ հաւնոցը։ Աքաղաղը թափահարեց թեւերը ու զիլ ձայնով կանչեց. «կուկուլիկ կո՛ւ»։ Հաւերը վար իջան իրենց թառերէն, կրկռացին և սկսան աղբը կոցել, ճճի գտնելու համար։

Չորրորդ ճառագայթը ինկաւ փեթակին վրայ։ Մեղուն դուրս սլացաւ իր մոմեղէն խցիկէն, կեցաւ փեթակին դրան առջեւ, թեւերը բացաւ եւ բզզալով թռաւ, գնաց մեղր հաւաքելու ծաղիկներէն։

Չինգերորդ ճառագայթը՝ իջաւ բուխերիկէն վար, հասաւ մշակի անկողնին։ Մշակը վեր ցատկեց տեղէն, խաչակնքեց երեսը, փառք տուաւ Աստուծոյ ու արօրն առած գնաց արտ՝ հողը հերկելու։

Վեցերորդ ճառագայթը գնաց, ուղղակի ինկաւ քընացող փոքրիկ մանուկին բարձին վրայ եւ սկսաւ անոր աչքերը ծակծկել։ Մանուկը արթնցաւ, աչքերը շփեց ու ելաւ։ Քիչ ետք ան ալ գիրքերն առաւ ու գնաց դպրոց։

— Ե՞բ կը պատահին այս բոլորը։

---

51. — ՄԱՆՈՒՇԱԿ

Կապոյտ գլխով, կանանչ ոտքով,
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.
Թէեւ տունկս է փոքրիկ ու ցած,
Աւոտներուն մէջ պահուըտած.
Բայց իմ փունջըս մէջ ամէն տաեն,
Թէ՛ աղքատի, թէ՛ մեծատան.
Իբրեւ զարնան առաջին զարդ
Կրնայ տեսնել միշտ ամէն մարդ։
Ես եմ զարնան սիրուն գուշակ,
Եւ իմ անունս է մանուշակ։

— Դեռ ուրիշ ի՞նչ ծաղիկներ գիտէք։

---

52. — ՄԱՆՈՒԿԸ ԱՐԵՒԻՆ

Իրիկուն էր։ Փոքրիկ Միհրան դեռ կը խաղար պարտէզին մէջ։

Միհրանիկ աչքը վեր վերցուց, տեսաւ թէ կարմիր արեւը կիսովին թաղուեր է լերան ետեւ։

— Արե՛ւ, կարմիր Արեւ, գոչեց Միհրանիկ, կ'աղաչեմ, քիչ մը ալ կեցիր, ի՞նչ գործ ունիս լերան ետեւ, ինչո՞ւ կ'ուզես այդտեղ մտնել, կեցի՛ր, ես դեռ կ'ուզեմ խաղալ, վազվզել, ես դեռ վախաք չունիմ պառկելու, քնանալու։

Արեւը լսեց մանուկին խօսքերը ու պատասխանեց.

— Մ՛յ ժիր տղայ, ես չեմ կրնար կանգ առնել. լերան ետեւ դեռ ուրիշ շատ աշխարհներ կան. այնտեղերէն ալ քեզի պէս աշխոյժ մանուկներ կան որ ինծի կ'սպասեն, պէտք է որ անոնց ալ այցելեմ կարգաւ. վաղը միւս կողմէն նորէ՛ն քեզի կը դառնամ առտուն կանուխ. գիշեր բարի...։

Վերջին խօսքը հազիւ թէ ըսած, Արեւը արդէն բոլորովին մտած էր լերան ետեւ։

— Արեւն ո՞ւր կ'երթայ գիշերը։

53. — ԳԻՇԵՐ ԲԱՐԻ

Ա՛լ դադրեցան ծառին վրայ
Երգերն անուշ թռչնիկին.
Լռեց աղմուկն աշխատութեան
Բանուորին ու մրջակին։
Գիշե՛ր բարի, բարի գիշեր,
Փոքրիկ մանուկ խաղասէր։

Մութը կոխեց, եւ առջեւէն
Յորեկն ու լոյս խոյս կուտայ,
Կուգայ պահը հրնանալու
Գրնա՛, պառկէ՛, ժի՛ր տղայ։
Գիշե՛ր բարի, բարի գիշեր,
Փոքրի՛կ մանուկ խաղասէր։

Հանգըստացի՛ր անկողնիդ մէջ
Եւ հրեշտա՛կը քունի,
Թո՛ղ աչքերդ մեղմիւ փակէ
Թըմրութիւնով հեշտալի։
Գիշե՛ր բարի, բարի գիշեր,
Փոքրիկ մանուկ խաղասէր։

54. — ՃՇՄԱՐՏԱԽՕՍ ՏԻԳՐԱՆԸ

Տիգրանին մի պզտիկ սղոց ընծայ տուին։ Տիգրան ա՛նքան ուրախ էր որ ձեռքն ինկածը կը սղոցէր, կը կտրեր։ Պարտէզ իջաւ եւ կտրեց սալորի մատաղատունկ մը զոր հայրիկը տնկած էր և մեծ խնամք կը տանէր անոր։

Իրիկուան երբ հայրիկը տուն դարձաւ, պարտէզին մէջ տեսաւ կտրուած սալորենին։ Սաստիկ վշտացաւ և բարկութեամբ պոռաց.

— Ո՞վ է կտրեր այս ծառը, սաստիկ պիտի ծեծեմ եթէ գտնեմ կտրողը։

Տիգրան որ հօրը մօտն էր, լսեց հայրիկին խօսքերը. քիչ մը մտածեց, յետոյ ըսաւ.

— Սուտ չեմ խօսիր, հա՛յրիկ, ես կտրեցի, սղոցովս կտրեցի, ծեծէ՛ զիս։

Հայրիկին բարկութիւնն իջաւ և գորովալի ձայնով ըսաւ.

— Այս ծառը շատ սիրելի էր ինծի, Տի՛գրան, բայց քու ճշմարտախօսութիւնդ ամէն բանէ աւելի կ՚արժէ. կը նէրեմ քեզի քանի որ ճշմարիտ խօսեցար։

Եւ հայրիկը գրկեց, հաբուրեց որդին։



55. — ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Գոմին, բակին մէջ մեր մեծ տան
կենդանիներ կան զանազան.
Գիրուկ խոզն ու ցատող հորթուկ,
Ճերմակ գառնուկն, ուղը խենդուկ,
Այծը մօրուեղ ու սուր եղջիւր,
Հնդկահաւը՝ փայլուն փետուր,
Խաթուն հաւը՝ կարմիր կատար,
Կոկոզավիզն ամբոր աղբար,
Սագն ու բադը՝ մեծվոր, կարճոտ։
Գիշեր, ցորեկ ջուրի կարոտ։
Ատնիք ամէնն ալ շարունակ
Ձայն կը հանեն ամէն տեսակ.
Հորթը՝ մո՜ւ, մո՜ւ, մո՜ւ, մո՜ւ, մո՜ւ,
Խոզը՝ ռուխի՜, խի՜, խի՜, խի՜,
Գառնուկը՝ մէ՜, մէ՜, մէ՜, մէ՜,
Այծը՝ պէ՜, պէ՜, պէ՜, պէ՜, պէ՜,

Հնդկահաւը՝ կուլա՜f, կլա՜f,
Հաւը՝ կը՜s կը՜s, կրsկրsա՜f,
Սագը՝ դա՜, դա՜, դա՜, դա՜, դա՜,
Բադը՝ վա՜f, վա՜f, վա՜f, վա՜f, վա՜f:

— Ուրիշ ի՞նչ կենդանիներ գիտէք մարդուն մօտն ու հեռը ապրող։



56. — ԵՐԿՈՒ ՄՈՒԿԵՐ

Օր մը փոքրիկ մուկը մեծ մուկին ըսաւ։
—Ո՛րքան չար ու ժլատ է մեր տանտերը, տունը կատուներով լեցուցեր է։ Այս ալ բաւական չէ, չորս կողմ ակնատներ կը դնէ ու կ՚ուզէ մեզ սպաննել այս կերպով։ Միթէ մենք շատ բանի՞ պէտք ունինք, կորը մը ճարպ, քիչ մը հացի փշրանք և քանի մը հատիկներ բաւական են մեզի։

—Իրաւ է, պատասխանեց մեծ մուկը, մեզմէ ամէն մէկուն քիչ բան հարկաւոր է, բայց մենք ալ քիչուոր չենք։

ԱՌԱԾ.— Կատուն որ խաղայ, մուկին անպատճառ կը դողայ։

57. — ՊՏՂԱՍԷՐ ԱՂՋԻԿԸ

Ես աղջիկ մըն եմ գեղադէմ,
Կարդալ գրել ալ գիտեմ.
Շատ կը սիրեմ շաքար, նուշ
Ու խաղողին համն անուշ:

Երէ ունիմ հանեցէ՛f,
Ինձ ալ բաժին հանեցէf.
Զանոնք կուտեմ ես չափով,
Ո՛չ անկիրթի պէս ափով:

ՀԱՆԵԼՈՒԿ 5.— Ոսկի կնուհիկ, միջուկն անուշիկ։

58. — ԼԱԼԿԱՆ ՄԻՆԱՍԸ

Փոքրիկ Մինաս լալկան տղայ մըն էր։ Լալով կ'արթննար, լալով կը քնանար, լալով կ'ուտէր, լալով կը խմէր։ Երբոր մայրիկէն բան մը ուզելու ելլար, լալով կ'ուզէր։ Երբոր ուզածը տային, պատճառ մը գտնելով նորէն կուլար։ Հազիւ թէ կը դադրէր, ելլի սաստիկ կուլար, ահագին վայնասուն հանելով։

Օր մը Մինաս տունին մառանը իջնել ուզեց և յանկարծ ծակի մը մէջ ինկաւ։ Մինաս սկսաւ լալ, պոռալ, կանչել, բայց տունին մէջ ոչ ոք հոգ ըրաւ։

Խեղճը ծակին մէջէն աղիողորմ ճիչեր կ'արձակէր, բայց ի դուր, մէկը չէր գար զինքը ազատելու։

Վերջապէս հայրիկը լսեց Մինասին ճիչերը, եկաւ գտաւ զինքը և դուրս հանեց ինկած ծակէն։

Մինաս ա՛լ անկէ յետոյ մոռցաւ լալկանութիւնը և ա՛լ պարապ տեղը չէր լար։

Ինչո՞ւ համար կարեւորութիւն չտուին Մինասի լացին և ժամանակին օգնութեան չեկան։

---

59. — ՄԵՐ ԺԱՄԸ

Ժամուն մէջ կայ խաչ ու խորան
Քրտոց, ծնծղայ, աւետարան.
Մոմ, ջահ, կանթեղ, փիլոն, բուրվառ,
Սուրբի պատկեր, խոյր ու շուրջառ։

Կը հաւաքուին հոն շատ մարդիկ,
Աղօթք կ'ընեն մեծ ու պզտիկ.
Յետոյ կ'առնեն մաս ու նշխար,
Բոլոր մարդիկ համ-հաւասար։

— Ի՞նչ կ'ընեն ժամուն մէջ։

ԱՌԱՋ.— Սուրբին մոմ, տղան կիլիկ։

---

60. — ԵՐԿՈՒ ԽԱՂԸՆԿԵՐՆԵՐ

Յակոբ ու իր քոյրը Պերճուհի կը խաղային իրարու հետ։ Յակոբիկ իր հոլը կը դարձնէր. Պերճուհի ալ իր ձիով կը խաղար։

Յանկարծ Յակոբիկ բարկացաւ և ըսաւ Պերճուհիին։

— Իմ հոլիս մի՛ մօտենար, ինծի հետ մի՛ խաղար։

— Դո՛ւն ալ իմ ձի՛ուս ձեռք մի՛ դպցներ, պատասխանեց Պերճուհի նեղացած։

Տղաք քիթերնին բերանին թթուեցուցին, իրարմէ հեռացան և սկսան առանձին խաղալ։ Բայց մինակ սկսուած խաղը երկար չտեւեց և անոնք շուտով մէկդի նետեցին իրենց խաղալիքները։

— Ինչո՞ւ համար Յակոբիկ և Պերճուհի նետեցին իրենց խաղալիքները։

61. — ԹՌՈՒՑԻԿԸ

Օ՛ն, վե՛ր ելիր, վեր ելիր,
Իմ գեղեցի՛կ թրռուցիկ,
Ամպերուն մով բարձրացի՛ր
Իբրեւ արծիւ սրլացիկ։

Առասանը երկայն է,
Ո՛ւչափ ուզես, ելի՛ր վեր,
Տեղս ընդարձակ ու մեծ է,
Զկան քեզի արգելքներ։

Հովը ահա կը փչէ
Հիմա քեզ թո՛ղ տամ պիտի,
Օ՛ն, ժամը ճիշտ յարմար է,
Թրռի՛ր բարձրերն երկինքի։

Օ՛ն, վե՛ր ելիր, վե՛ր ելիր
Իմ գեղեցի՛կ թրռուցիկ,

Առասանս երկայն է,
Ո՛ւչափ ուզես, վե՛ր եկիր:

---

62. — ԱԳՌԱՒԻՆ ԽՐԱՏԸ

Մայրը ագռաւը ուզեց խրատ մը տալ իր ձագերուն, զանոնք թռցնելէ առաջ սկսաւ կանչել։

— Ղա՛, ղա՛, ղա՛...։

Ձագերը իրենց մօր գլուխը ժողվուեցան։ Այն ատեն ագռաւն ըսաւ.

— Ձագո՛ւկներս, ա՛լ օդին մէջ ազատ պիտի թռչիք դուք, ձեզի խրատ մը տամ. գիտցէ՛ք որ մարդիկ չար են. զգո՛յշ կեցէք մարդոցմէ, մանաւանդ երբոր գետին ծռին քար վերցնելու։

Ձագուկները քիչ մը մտածեցին. յետոյ ըսին։

— Սիրելի՛ մայր, հապա ի՞նչ ընենք եթէ մարդը առաջուց ձեռքին մէջ պահած ըլլայ քարը։

Մայրը ագռաւը զարմացաւ իր ձագերուն խելացութեան վրայ ու ըսաւ.

— Ապրի՛ք, ձագուկներս, հիմայ հասկցայ թէ դուք իրա՛ւ պիտի ապրիք։

ԱՌԱՁ.— Պլպուլն իր տարտը կուլայ, ագռաւը ղա՛, ղա՛ կ'ընէ։

---

63. — ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ

Կաղանդ պապան ահա՛ հասաւ,
Խաղալիքներ մեզի բերաւ.
Օրեր առաջ կ'սպասէինք,
Պէս պէս նվէր կ'երազէինք:

Բերաւ նաեւ չամիչ, թուզ, նուռ,
Նուռ, տանձ, կաղին, արմաւ, նուռ.
Ուտե՛նք խմե՛նք ուրախ ցատկենք,
Երգե՛նք, պարե՛նք ու ֆեզ գովենք:

Բարի՛ ծնողխ, բոլոր ուրտէս
Երկար օրեր կը մաղթեմ ձեզ.
Միշտ երջանիկ, անվիշտ տարի,
Շընորհաւոր ձեզ նոր տարի:

— Ի՞նչ կ'ընեն Կաղանդին ու Նոր տարին:

---

64. — ԱՂՈՒԷՍԻՆ ՈՒԽՏԸ

Աղուէսն անգամ մը, ինչպէս եղաւ, գեան ինկաւ ու պիտի խեղդուէր:

— Տէ՛ր Աստուած, պոռաց աղուէսը, զիս սա տեղէն ազատէ, քեզի աման մը խունկ կուտամ:

Աղուէսը կերպով մը ազատեցաւ գե-տէն:

— Հիմա թէ որ աման մը խունկ ծխեմ, Աստուած ալ պիտի նեղուի ծուխին մէջ, ըսաւ աղուէսը ինքնիրեն, ու չկատարեց ուխտը:

Ուրիշ օր մը աղուէսը նորէն ինկաւ գետը:

— Աստուած, քեզի երկու աման խունկ, հառաչեց ջուրին մէջէն:

Բայց Աստուած ա՛լ չի խաբուիր:

— Ի՞նչ եղաւ աղուէսին վախճանը:

---

65. — ՆՈՐ ՏԱՐԻՆ ՈՒ ԱՂՔԱՏՆԵՐԸ

Հին տարին անցաւ,
Երեսը դարձուց.
Նո՛ր ահա եկաւ
Իր դէմքը ցըցուց:

Տղամ խնդացին,
Կերան խմեցին,
Նոր եկող տարին
Դիմաւորեցին:

Բայց կան աղքատներ
Մերկ անպատպար,
Մնացած անտէր
Շատեր կան աւա՜ղ:

Երբ անոնց հանէի
Բաժին մը պզտիկ,
Աստուծմէ կ'առնէի
Հազարապատիկ:

---

66. — ՇՆԻԿՆ ՈՒ ՓԻՍԻԿԸ

Փիսիկն ու շնիկը խաղաղութեամբ կ'ապրէին մէկ տան մէջ:

Օր մը խոհանոցին մէջ կտոր մը մսոտ ոսկոր ձեռք անցուցին: Փիսիկն ուզեց որ ոսկորն ինք առնէ, ուտէ. շնիկն ալ ուզեց որ ինք ուտէ: Դէմ դիմաց անցան ու սկսան կռուըտիլ:

Շնիկն ակռաները բացաւ ու սկսաւ խը՛ռ, խը՛ռ խօսիլ: Փիսիկն ալ մաղերը տընկեց ու սկսաւ գէշ, գէշ մրմռալ:

—Հա՜ւ, հա՜ւ, հաչեց շնիկը:

—Միա՜ւ, միա՜ւ. մլաւեց կատուն:

Կռիւը մեծցաւ: Փիսիկը ճանկ մը նետեց շունին: Շնիկն ալ ակռայ մը զարկաւ կատուին:

Մէյմըն ալ դրացիին սեւ կատուն որ հեռուէն կռիւը կը դիտէր, կամաց կամաց

մօտեցաւ և յանկարծ ցատքելով՝ ոսկորը գետնէն խլեց ու փախաւ:

— Ո՞վ օգուտ քաղեց այս կռիւէն:

---

67. — ԽԵԼՕՔ ԴԱՒԻԹԻՆ ԿՈՎԸ

Կար ու չկար, ժամանակին խելօք Դաւիթ մը կար:

Օր մը խելօք Դաւիթ քաղաք տարաւ իր կովը, տուաւ մունետիկին ձեռքը ու ծախու հանեց: Ատենէ մը ի վեր կովը քաշած էր կաթը ու Դաւիթ գոհ չէր անկէ:

Մունետիկն սկսաւ խելօք Դաւիթին կովը հրապարակին վրայ պտտցնել, անոր ամէն մէկ մաղին մէյմէկ գովք դնելով:

Խելօք Դաւիթ զարմանքով մտիկ ըրաւ մունետիկին գովեստները՝ իր կովուն վրայ, և ինքնիրեն ըսաւ.

—Թէ որ իմ կովս ա՛յսքան աղէկ է, ինչո՞ւ ծախեմ:

Ու կովը մունետիկին ձեռքէն առնելով՝ գեղը դարձաւ:

ՍԱՌԱԾ.— Խենդն ըսաւ, խելօքը հաւատաց:

68.— ՋԱՏԻԿ

Զատիկ է եկեր,
Մեզ նոր որ բերեր,
Ու նոր օրուան հետ՝
Կարմիր հաւկիթներ:
Զատիկ է եկեր,
Եղբայր, քոյր, ընկեր
Սիրով իրարու
Կուտան համբոյրներ:
Զատի՛կ է, Զատի՛կ,
Կարմրո՛ւկ Զատիկ:

— Ի՞նչ կ'ընեն Զատիկին, ինչո՞ւ կը սիրեք Զատիկը:

69.— ԱՆՀՈԳ ՏՂԱՆ

Միհրան դաս կը սորվէր: Երբոր դասը լրացուց, թողուց գիրքերն ու տետրակները սեղանին վրայ և դուրս գնաց խաղալու:

— Միհրա՛նիկ կանչեց մայրը, առաջ ժողվէ՛ գիրքերդ, յետոյ խաղա:

— Հիմա կը ժողվեմ, ըսաւ Միհրան, ու դուրս գնաց առանց գիրքերը հաւաքելու:

Միհրանին փոքրիկ եղբայրը քիչ վերջ մօտեցաւ սեղանին, ձեռք առաւ Միհրանին գիրքերը որ պատկերներուն նայի: Ցանկարծ ձեռքը դպաւ բաց թանաքամանին, և Միհրանին բոլոր գիրքերն ու տետրակները մելանով լցրճեցան:

Միհրան լալով գնաց մօրը գանգատելու:

— Դիտցէ՛ք տեսնեմ, ի՞նչ ըսաւ մայրը՝ Միհրանին:

70.— ՄԵՂՈՒ

Հա՛, ծագեցաւ արեգակը,
Հա՛, ծաղկեցաւ մանուշակը,
Մեղուն թողուց իր փեթակը,
Տզտզալով, տզտզալով:

Մեղուն թրռաւ ծաղկէ ծաղիկ,
Մեղրը առաւ քաղցր անուշիկ,
Մոմը տարաւ հոտոտ լուսիկ
Բզբզալով, բզբզալով:

Անուշ մեղրը մանրը տղոց,
Դեղին մոմն ալ ամէն արբոց:

—Մեղուն ի՞նչ կ'արտադրէ, ուրիշ ի՞նչ միջատներ գիտէք:

ԱՌԱՆ.—Հաղար հեղ մեղը ըսէ՛, բերանդ չանուշնար:

---

71. — ՅԱՋՈՂ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

Օր մը մի քանի ընկերներու հետ որսի ելանք: Ամէնքս ալ ունէինք մէյմէկ ընտիր որսի հրացան, անկոթ և անփող:

Սարեր, ձորեր պտտեցանք որս փընտրելու: Շատ գնացինք, քիչ գնացինք, մէյմնալ հեռուէն տեսանք խոշոր, շա՜տ խոշոր անհոգի եղնիկ մը որ մարմին ալ չունէր:

Անմիջապէս քաշեցինք մեր անկոթ ու անփող հրացանները, նշան առինք և թրա՜ք...

կրակեցինք, ու զարկինք, սպաննեցինք անհոգի, անմարմին եղնիկը:

Ապա մեր անկոթ, անփող հրացաններուն վրայ կերպով մը բեռցուցինք այն խոշոր անմարմին եղնիկը, և տքալով, փքալով, արիւն քրտինք մտնելով՝ բերինք գիւղ:

Գիւղին մէջ ասղին ինկանք, անղին ինկանք, անբերան դանակ մը ճարեցինք, և այն անբերան դանակով լաւ մը մորթեցինք, քերթեցինք անմարմին եղնիկը:

Յետոյ վնտռեցինք, գտանք ահագին կաթսայ մը որ տակ չունէր, տարինք, լեցուցինք անջուր լիճէն, անմարմին եղնիկը դրինք անտակ կաթսային մէջ և անկրակ օճախին վրայ աղէկ մը եփեցինք:

Կանչեցինք դուռ դրացի, բոլորուեցանք շուրջը, կերանք, կերանք, կերանք, ա՜յնչափ կերանք որ քիչ մնաց ճաթէինք... բայց ո՜չ աչքերնիս բան տեսաւ, ո՜չ բերաննիս բան մտաւ:

—Ինչո՞ւ համար աչքերնին բան չտեսաւ, բերաննին բան չմտաւ:

---

72. — ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Չորս եղբայր են, ամէն տարի
Մահ կուգան շուրջը մեր երկրի,
Չորսն ալ հաւասար ունին հասակ,
Եւ պարգեւներ՝ հազար տեսակ :
Փոքր եղբայրն է պատանի,
Բողբոջ տերեւ, ծաղիկ ունի,
Պայծառ արեւ, կանաչ աւոս,
Որոնց տղամ են միշտ կարոս :
Երկրորդ եղբայրն՝ երիտասարդ,
Կուսայ մեզի անձրեւ առաս,
Անձրեւին հետ արեւ, ջերմ օդ,
Յոյս կուսայ մեզ հունձի հոխ, յորդ :
Երրորդ եղբայրն է չափահաս,
Միրգերով լի ունի մի թաս,
Եւ կը բաժնէ տղոց իր գանձ,
Ծիրան, խնձոր, խաղող ու տանձ :
Չորրորդ եղբայրն է ծերունի,
Յուրս ու խաւար շալկած ունի,
Կ'ամայացնէ այգի, անտառ.
Ձիւնով ծածկէ լեռ, դաշտ ու ծառ :

—Քանի՞ եղանակ ունի տարին, ըսէ՛ք անուններըը :

73. — ՕՁՆ ՈՒ ԳԵՂԱՑԻՆ

Աշնային ցուրտկեկ առտու մը գեղացին արտին մէջ գտաւ օձ մը որ ցուրտէն սառեր, թմրեր էր :

Գեղացին վերցուց օձը, դրաւ խարոյկին մօտ որ տաքնայ :

Օձը տաքնալով՝ քիչ վերջ թմրութենէն սթափեցաւ և իր նիշ ընէ՝ ա՛ղէկ. գեղացիին վրայ վազեց որ խայթէ :

Գեղացին ալ էր բահովը զարկաւ օձին ու սպաննեց :

—ԱՌԱԾ. —Օձն իր չապիկը կը փոխէ, բնութիւնը չի փոխեր :

ՀԱՆԵԼՈՒԿ 6.—Աչքեր ունի, ոտքեր չունի,
Մարդ կ'սպաննէ, ձեռքեր չունի,
Հաւկիթ կ'ածէ, փետուր չունի,
Շապիկ ունի, կար չունի :

74.— ՏԱՐՈՒԱՆ ԱՄԻՍՆԵՐԸ

Մարտը կուտայ ձիւնածաղիկ,
Ապրիլը կուտայ մանուշակ,
Մայիսին կը բացուի վարդը,
Սոխակը կ'երգէ անուշակ:

Յունիսը մեզի խոս կուտայ,
Իսկ Յուլիսը առաս ցորեն,
Օգոստոսը տանձ ու խնձոր
Եւ ուրիշ շատ հատուն միրգեր:

Սեպտեմբերը մեզի կուտայ
Բազմատեսակ լաւ խաղողներ
Հոկտեմբերը՝ կարմիր գինին,
Նոյեմբերը՝ կաղամբ ու բողկ:

Դեկտեմբերին ալ ձիւն կուգայ,
Յունվարին կը ծածկէ սար, ձոր,
Փետրուարին ալ կ'սկսի,
Փոփոխակի ցուրտ եւ տաք օր.

— Ի՞նչ է տարին, քանի՞ ամիս ունի տարին, քանի՞ օր ունի ամիսը:

ՀԱՆԵԼՈՒԿ 7.—Ծառ մը ունիմ 12 ճիւղ ունի
Ամեն մէկ ճիւղը 30 բուփ ունի:
Ծառն ի՞նչ է, ճիւղն ի՞նչ է, բուփն ի՞նչ է:

75.—ԱՐԵՒ ՔՈՒՐԻԿՆ ՈՒ ԼՈՒՍԻՆ ԱՂԲԱՐԻԿԸ

Քոյր ու եղբայր էին Արեւն ու Լուսինը, երկուքն ալ անմման գեղեցիկ:

Մայրիկը պատուիրեց անոնց որ երթան, ցորեկն ու գիշերը, հերթով հսկեն աշխարհքին:

— Մա՛յրիկ, ես աղջիկ եմ, կը վախնամ, ես չեմ հսկեր գիշերը, ըսաւ Արեւ քուրիկը:

— Թէ որ կը վախնաս, դուն ցորեկը հսկէ, գիշերն ալ թող հսկէ Լուսին աղբարիկդ, ըսաւ մայրիկը:

— Ցորեկն ալ կ'ամչնամ, ամէն մարդ ինծի կը նայի, ըսաւ Արեւը ու կեցաւ տեղը:

Այն ատեն մայրիկը բուռ մը ասեղ տուաւ Արեւին որ իրեն նայողին աչքերուն խօթէ ու մէկը չկարենայ իր երեսը նայիլ:

Գեղանի զաւակները հաւանեցան, և այն օրէն ի վեր Լուսինը գիշերները դուրս կ'ելլէ հսկելու աշխարհքին և Արեւը՝ ցորեկները. միայն թէ Արեւը, ամչնալուն, չի թողուր որ նային իր լոյս-երեսին և բուռ մը ասեղ կը մնէ իրեն նայողին աչքերուն ու կը լացնէ:

— Ըսէ՛ք թէ կրնա՞ք Արեւին ուղղակի նայիլ, և եթէ նայիք, ի՞նչ կը պատահի։

ՀԱՆԵԼՈՒԿ 8.— Դգալ մը ներկ է, աշխարհ կը ներկէ։

---

76. — ԾԱՌԻԿ

Ա՛յ նորատունկ իմ ծառիկ,
Ծա՛ռ սիրական գեղեցիկ,
Արմա՛տ ձգէ հողին մէջ
Որ չշարժէ քեզ մրրիկ։

Քեզի համար ամէն օր
Ջուր կը բերեմ սափորով,
Քու տակդ ես կը փորեմ
Որ զօրանաս դուն շուտով։

Ծաղիկ, տերեւ ու պըտուղ
Թո՛ղ զարդարեն քու ճիւղեր,

Անոնց վրայ թո՛ղ երգեն
Անուշ ձայնով սոխակներ։

Երբ հասըն այդ քու բունդդ։
Այն ժամանակ փոքրիկ
Թո՛ղ մոռնչէ, որոտայ,
Զի՛ վնասեր քեզի, ծա՛ռիկ։

ԱՌԱՁ. — Ծա՜ թող բլայ, ծո՛ւռ թող բլայ։

---

77. — ԽՆՁՈՐԵՆԻԻՆ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ

Գարուն է. խնձորենին կոճկոտէր է։ Շատ չի տեւեր, կոճակները կը բացուին ու դուրս կուտան ծաղիկները։ Խնձորենիին բոլոր ճիւղերը հիմա զարդարուած են վարդագոյն ծաղիկներով։

Իրարու ետեւէ այցելուներ կուգան խնձորենիին ու սիրով կ'ընդունուին։

Ամէնէն առաջ կուգան մեղուները, խնձորենիին ծաղիկներուն մէջ կը խօթեն իրենց գլխարկները և անուշ հիւթը կը ծծեն։

Քիչ վերջ ծաղիկները կը պառուին, կը թափին ու խնձորենին կը զարդարուի մանր

ըիկ թարմ տերեւներով։ Այս անգամ կուգան թրթուրները և անյագաբար կ'ուտեն անոր փափուկ տերեւները։

Կ'անցնի ժամանակ, կուգայ ամառը ու խնձորենին կը ծածկուի կարմրուկ խնձորներով։ հիմա ալ անոր կ'այցելեն թռչնիկներն ու մանուկները։

— Ինչո՞ւ համար խնձորենիին կ'այցելեն թռչունները ու մանուկները։

— Դեռ ուրիշ ի՞նչ ծառեր գիտէք։

---

78. — ԳԱՐՈՒՆ

Օ՜հ, ձմեռը գընաց հեռուն,
Բարի եկաւ աղուոր գարուն,
Թռչունները բոյն կը շինեն,
Թիթեռնիկը եկաւ նորէն։

Երկինք կապոյտ է ու պայծառ,
Ծաղիկ հագան պարտէզ ու ծառ,
Պզտի՛կ տղամ, սիրո՛ւն տղամ,
Ի՞նչ կե՛ցեր էք, եկէք խաղանք։

---

79. — ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

Յոլակ հայրիկին հետ անտառը գնաց պտըտելու։ Երբոր վերադարձան, մայրիկը հարցուց Յոլակին։

— Պատմէ՛ նայիմ, ինչե՞ր տեսար անտառին մէջ։

Յոլակ պատասխանեց.

— Շատ բան տեսայ, մա՛յրիկ, ի՛նչ գեղեցիկ է անտառը։ Ես շատ մանեկայ անտառին մէջ. այնտեղ տեսայ մեծ մեծ ծառեր, խիտ խիտ բուսած։ Երբ յոգնեցայ, շատ մեծ ծառի մը տակ նստայ։ Թռչունները անուշ անուշ կ'երգէին անոր վրայ։

Անտառին մէջ տեսայ նաև փայտահատներ։ Անոնք իրենց կացիններով չոր ծառերը կը կտրտէին և վառելու փայտ կը պատրաստէին։

Տեսայ այնտեղ պաղ պաղ աղբիւրներ. ես խմեցի անոնց անուշ ջուրերէն։ Անտառին մօտ կ'արածէր մօտակայ գիւղին նաւին խիրը։ Նախիրին մօտ պառկած էին խոշոր գամբռեր։

Յանկարծ՝ բո՜մբ... : Ես վեր ցատկեցի վախէս, թռչունները լռեցին : Մէյմնալ տեսայ որ նապաստակը արիւնլուայ կը փախչէր. որսի շունն ալ կը վազէր ետեւէն :

— Ի՞նչ պատահած էր նապաստակին. որսորդները ի՞նչ կ'ընեն :

---

80. — ԱՌՈՒԱԿ

Լերկ ժայռին մէջէն վնիs մի առուակ
Կը բրխի մեղմիկ խոխոջ հանելով.
Խոռունկ ձորին մէջ կը հոսին արագ
Փրփուր ալիքներն արծաթի փայլով :

Առաջ կը վազէ քաղցր շշուկով
Դաշտեր, անտառներ, մարգեր կուգայ մանն,
Եւ կարկաչելով, վեր վար սողալով,
Իր ափերուն շուրջ կը սրփռէ նոր կեանք :

— Առուակն ո՞ւր կ'երթայ, գետակն ո՞ւր կ'երթայ, գետն ո՞ւր կ'երթայ :

---

81. — ԱՔԼՈՐԻՆ ՁՐՈՅՑԸ

Կար չկար, աքլոր մը կար :

Օր մը ինչպէս եղաւ, այդ աքլորին ոտքը փուշ մտաւ :

Աքլորը շատ աշխատեցաւ, չկրցաւ փուշը ոտքէն հանել : Գնաց պառաւ մամիկի մը որ թոնիրը վառեր՝ հաց կ'եփէր, ու ըսաւ :

— Մա՛միկ, մա՛միկ, կ'աղաչեմ, սա փուշը հանէ ոտքէս :

Մամիկը փուշը հանելով՝ թոնիրը ձգեց :

Մէկ-երկու օր վերջ՝ խելքին ի՛նչ փչեց, աքլորը գնաց մամիկին, ետ ուզեց փուշը։ Մամիկն ըսաւ։

— Փուշը վառեցաւ, ո՞ւրկէ տամ։

Աքլորը թռաւ, մամիկէն հաց մը խլեց ու փախաւ։

Քիչ մը անդին գնաց, տեսաւ որ հովիւ մը թան է հարեր ու պիտի ուտէ։ Ըսաւ։

— Հո՛վիւ, հո՛վիւ, ա՛ռ սա հացը, թանիդ հետ կեր։

Հովիւը հացն առնելով՝ թանին մէջ փըշրեց ու կերաւ։

Ժամանակ վերջը աքլորը գնաց հովիւին ու ըսաւ.

— Հացս կ'ուզեմ, ե՛տ տուր։

Հովիւը ի՞նչպէս ետ տայ կերած հացը։ Աքլորը թռաւ, հովիւէն ալ մաքի մը առաւ ու փախաւ։

Գնաց, գնաց, նայեցաւ որ տեղ մը հարսնիք կ'ընեն։ Մաքին տուաւ հարսնեւորերուն ու ըսաւ.

— Առէ՛ք սա մաքին, մորթեցէ՛ք կերէ՛ք։

Անոնք ալ մորթեցին կերան։

Եարը գնաց ու մաքին ետ ուզեց հարսնեւորներէն։ Ըսին.

— Մաքին կերանք, ի՞նչպէս տանք։

Աքլորը թռաւ ու հարսնեւորներէն հարսը խլեց, փախաւ։

Շատ գնաց, քիչ գնաց, տեսաւ որ մարդ մը նստեր, ճզտրիկ կը զարնէ։ Աքլորը զմայլեցաւ ճզտրիկի ձայնին, հարսը տուաւ մարդուն, ճզտրիկն առաւ։ Յետոյ ծառի մը տակ նստելով՝ սկսաւ ճզտրցնել ու խաղ կանչել։

Ճզտրը, ճզտրը, ճզտրրիկ,
Փուշիկ տուի, հացիկն առի,
Հացիկ տուի, մաքին առի,
Մաքին տուի, հարսիկն առի,
Հարսիկ տուի, ճզտրիկն առի,
Ճզտրը, ճզտրը, ճզտրրիկ...։

---

82. — ԵՐԵՔ ՁՈՒԿԵՐԸ

Լիճի մը մէջ երեք ձուկեր կ'ապրէին, ուրախ զուարթ կը լողային ու կը խաղային ջուրերուն հետ։

Ձուկերէն մին խոհեմ բնութիւն ունէր, մէկը քաչ և յանդուգն էր, միւսը անհոգ և դանդաղ էր։

Օր մը ձկնորս մը եկաւ լիճին եզերքը

և կարթը ձգեց ջուրին մէջ։ Կարթին ծայրը անցուած էր համեղ խայծ մը։



Խոհեմ ձուկը մօտեցաւ խայծին, կռահեց վտանգը և զգուշացաւ։

Յանդուգն ձուկը վազեց, խլեց խայծը, բայց իր քաջութեամբը ինքզինք ազատեց կարթէն։

Դանդաղ ձուկը ապուշի պէս բռնուեցաւ կարթէն։ Զկնորսը հանեց ձուկը ջուրէն և դրաւ սակառին մէջ։

— Զկնորսն ի՞նչ ըրաւ բռնած ձուկը։

83. — ՆԱՒԸ

Քամին ծովուն երեսէն
Ծիծաղադէմ կը նեմէր,
Եւ կը մղէր դէպ՝ առաջ
Թէ փոքր ու թէ մեծ նաւեր։
Իսկ նաւերը ճօճելով
Կը խաղային ծովուն հետ,
Եւ իրենց լայն թեւերով
Կը սուրային իբրեւ նետ։

— Քամին ի՞նչպէս առաջ կը քշէ նաւը։

84. — ՁԱՐԱՃՃԻ ՔԱՄԻՆ

Կը ճանչնա՞ք Հով պապուկը։ Ան երկու տղայ ունի, մէկուն անունն է Զեփիւռիկ, միւսին անունն է Քամի։

Զեփիւռիկ շատ խելօք է, ամէն մարդ կը սիրէ զինք, բայց Քամին շատ չար է. ան բնաւ խելօք չի կրնար կենալ, ուր որ երթայ՝ կը կոտրէ, կը թափէ և անհամ կատակներ կ'ընէ։

Զարահճի Քամին անգամ մը որ դուրս ելաւ, կը տեսնէս որ ադին օրիորդի մը գլխարկը կը թռցընէ գլուխէն. քիչ մը անդին ուրիշի մը հովանոցը եաև կը դարձնէ։ Մէյմնալ կը նայիս որ կը յարձակի տանտիկնոջ փռած ճերմակեղէններուն վրայ, կը խլէ շապիկ մը, կը նետէ դրացիին պարտէզը, և ապա փողոցները ինկած՝ կ'արշաւէ խենդի պէս։

Ահա՛ փողոցի աւազն ու փոշին հաւաքեր է, վեր կը հանէ, անցորդներուն աչքն ու բերանը կը լեցնէ ու վա՛զ... կ'երթայ, կը կորսուի։

Յանկարծ բաց պատուհանէդ ներս կը մտնէ, սեղանիդ թուղթերը իրար կ'անցընէ, կը փչէ, կը մարէ ճրագը և քեզ մութը կը թողու, ու ինք սուլելով, ծիծաղելով՝ կը խուսափի վառարանին ծակէն։

ԱՌԱՁ. Քամիին բերածը քամին կը տանի։

---

85. — ԵՐԿՐԻ ՁՈՐՍ ԿՈՂՄԵՐԸ

— Գիտցի՛ր, տղա՛յ, որ երբ կ'ըլլայ առաւօտ՝
Իմ ծոցէս դուրս կ'ընէ եղ
Պայծառ արեւն որուն ունիս դուն կարօտ.
Իմ անունս է *Արեւելք*։

— Յորեկէն վերջ՝ երբոր կ'ըլլայ իրիկուն,
Դեռ չկոխած խաւար, մութ,
Ես կ'առնեմ ծոցս արեւն ու հոն ըլլայ հուն.
Իմ անունս է *Արեւմուտք*։

— Ամառէն վերջ երբոր կուգայ սառ ձմեռ
Ու դուն ցուրտէն կը մրսիս,
Իմ ծոցէս միշտ կը փընչեն պաղ քամիներ,
Ի՛մ ալ անունս է *Հիւսիս*։

— Ձմեռէն վերջ՝ երբոր կուգայ շիտ գարուն,
Գիտցիր, տղա՛յ, որ իրաւ
Ինձմէ կ'ելլէ շունչը տաքուկ հովերուն,
Իմ ալ անունս է *Հարաւ*։

— Ի՞նչ կը կոչուին երկրի չորս կողմերը, ի՞նչպէս կրնաս որոշել զանոնք։

---

86. — ՊԱՊՈՒԿԻՆ ՀԱՆԵԼՈՒԿԸ

Զմեռ իրիկուն մը տանուտէր Խաչոյենց դուռը զարկաւ ծերուկ մուրացիկ մը։ Դուռը բացին։

Ծերուկը աղաչական կերպարանքով մը ըսաւ.

— Ես զարիպ եմ, ի՛նչ կ՚ըլլայ, զիս այս գիշեր ներս առէք, ախոռին անկիւնը տեղ մը տուէք, պառկիմ։

Խաչոյի կինը գթասիրտ էր, խղճաց ծերուկին վրայ, զանի ներս առաւ ու տարաւ մեծ սենեակը, օճա՛խին գլուխը նստեցուց։

Ընթրիքէն վերջ՝ Խաչոյի թոռնիկները ժողվուեցան հիւր ծերուկին գլուխը ու ըսին.

— Պա՛պուկ, պա՛պուկ, մեզի հէքեաթ մը պատմէ։

— Ես հեքեաթ-մէքեաթ չեմ գիտեր, ըսաւ ծերուկը։

Փոքրիկները հեքեաթը շատ կը սիրէին. ուստի շատ աղաչեցին պապուկին որ անպատճառ բան մը պատմէ։ Պապուկը՝ ճարը հատած, երբոր կը մտածէր թէ ի՛նչ պատմէ, նայեցաւ որ պատէն հարսին ոսկի շարոցը կախուած է, դարակին վրայ նորուկ կարմիր մուճակ մը դրուած է, ախոռէն ալ

ձորիի մը խրխնջալու ձայնը կուգայ ականջին։ Այն ատեն պապուկը տղոց դարձաւ ու ըսաւ.

— Ես հէքեաթ-մէքեաթ չեմ գիտեր, բայց ձեզի հանելուկ մը զուրցեմ, գիտցէ՛ք։

Պատին ճնկըլիկը ծոցիկս,
Ըռաֆին կարմըրուկը տոտիկս,
Ախոռին քսքսուկը տկուկս,
Առտուն պապուկը ո՞ւր կը գտնէք։

Տղաքը չհասկցան պապուկին հանելուկը, նորէն նորէն ըսել տուին, շատ մտածեցին, շատ ալ խնդացին, մինչև որ քունները տարաւ։

Առտու եղաւ ամէնքն ալ արթնցան, եկան։ Պապուկը փնտռեցին, բայց պապուկ չկար, գնացեր էր։ Մէյմնալ նայեցան որ պատին ոսկի շարոցը չկայ, դարակին մուճակն ալ չկայ, ախոռին ձորին ալ չկայ։

Հիմա գիտցէ՛ք նայիմ, ի՞նչ էր պապուկին հանելուկը։

87. — ԲԱԴԻԿԸ

Բա՛դիկ, բա՜դիկ,
Կարմիր թաթիկ,
Ո՞ւր կ'երթաս դուն
Կամաց, կամաց,
Ձագուկներդդ
Ձորս կողմդ առած։
— Կ'երթամ վնիտ ջուր գտնելու
Ձագուկներս լուանալու,
Ձագուկներս մաքուր, մաքուր,
Տղոց երեսն է աղտ ու մուր։

— Բազդատեցէ՛ք բաղը հաւուն հետ. բաղը ի՞նչ կը սիրէ. հաւը ջուր կը սիրէ՞

ԱՌԱԾ. — Բաղը ջուր կը պոռայ հաւը՝ չոր։

88. — ՄԱՄԱՆ ՈՒ ԱՆԾԵՂԸ

Կ'ըլլայ չըլլար, ժամանակին մամա մը կ'ըլլայ։

Օր մը մաման այծը կթելով՝ կաթը մէկ կողմ կը դնէ։ Մէյմնալ անծեղ մը կուգայ, մամա՛յին կաթը կ'ուտէ, կը թափէ։ Մաման վրայ հասնելով՝ ձեռքի փայտովը անծեղին կը զարնէ, պոչը կը կտրէ։

Անծեղը կ'ըսէ.
— Մա՛մա մա՛մա, պոչիկս տուր։
Մաման ալ կ'ըսէ.
— Կաթս տուր որ պոչիկդ տամ։
Անծեղը կ'երթայ կովուն ու կ'ըսէ։
— Կո՛վիկ, կո՛վիկ, կաթ տուր ինծի։
Կովն ալ կ'ըսէ.
— Խոտ բեր ինծի որ կաթ տամ։
Անծեղը կ'երթայ արտին ու կ'ըսէ.
— Ա՛րտիկ, ա՛րտիկ, խո՛տ տուր ինծի։
Արտն ալ կ'ըսէ։
— Ջուր բեր ինծի որ խոտ տամ։
Անծեղը կ'երթայ աղբիւրին ու կ'ըսէ։
— Ա՛ղբիւր, ա՛ղբիւր, ջո՛ւր տուր ինծի։
Աղբիւրն ալ կ'ըսէ։
— Կո՛ւժ բեր ինծի որ ջուր տամ։
Անծեղը կ'երթայ աղջկան մը ու կ'ըսէ։

—Ա՛ղջիկ, ա՛ղջիկ, կուժդ ինծի՛ տուր։
Աղջիկն ալ կ՚ըսէ։
—Ինծի՛ կօշիկ բեր որ կուժս տամ։
Անծեղը կ՚երթայ կօշկակարին ու կ՚ըսէ։
—Կո՛շկար, կո՛շկար, ինծի՛ կո՛շիկ տուր։
Կօշկարն ալ կ՚ըսէ.
—Կաշի՛ բեր ինծի՛ որ կօշիկ տամ։
Անծեղը կ՚երթայ խաղախորդին ու կ՚ըսէ.
—Խա՛ղախորդ, խա՛ղախորդ, ինծի՛ կաշի տուր։
Խաղախորդն ալ կ՚ըսէ.
—Հա՛ց բեր ինծի՛ որ կաշի տամ։
Անծեղը կ՚երթայ հացարարին ու կ՚ըսէ.
—Հացա՛ր, հացա՛ր, հա՛ց տուր ինծի։
Հացարարն ալ կ՚ըսէ.
—Ալիւր բեր ինծի՛ որ հաց տամ։
Անծեղը կ՚երթայ ջաղացպանին ու կ՚ըսէ.
—Ջաղա՛ցպան, ջաղացպան, ինծի՛ ալի՛ւր տուր։
Ջաղացպանն ալ կ՚ըսէ.
—Ցորե՛ն բեր ինծի՛ որ ալիւր տամ։
Անծեղը կ՚երթայ կալորին ու կ՚ըսէ.
—Կա՛լոր, կա՛լոր ինծի՛ ցորեն տուր։
Վերջապէս կալորը կուտայ ցորենը։
Անծեղը կը տանի ցորենը ջաղացպանին, ջաղացպանն իրեն ալիւր կուտայ, ալիւրը կը տանի հացարարին, հացարարն իրեն հաց

կուտայ. հացը կը տանի խաղախորդին, խաղախորդն իրեն կաշի կուտայ, կաշին կը տանի կօշկարին, կօշկարն իրեն կօշիկ կուտայ, կօշիկը կը տանի աղջիկն, աղջիկն իրեն կուժ կուտայ, կուժը կը տանի աղբիւրին, աղբիւրն իրեն ջուր կուտայ, ջուրը կը տանի արտին, արտիկն իրեն խոտ կուկայ, խոտը կը տանի կովուն, կովիկն իրեն կաթ կուտայ, կաթը կը տանի մամային, մաման ալ պոչիկը կուտայ։

---

89. — ՏՕՆԻ ՕՐԵՐ

Յունուարին մենք ունինք Ծնունդ,
Փետրուարին՝ Տաճար-Գալուստ։
Մարտը մեզի կը բերէ Զատիկ,
Հետն ալ մի թունդ Նաւակատիք։
Ապրիլը՝ մեծ Սուրբ Աւետում,
Մայիսին ալ Սուրբ Համբարձում։
Յունիսը կը բերէ վերուստ
Շընորհք բաժնող Հոգեգալուստ.
Յուլիսը միշտ փայլուն, պայծառ
Կը բերէ մեզի Սուրբ Վարդավառ։
Օգոստոսին ալ ճի՛շդ կէսին՝

Վերափոխումը Սուրբ Կոյսին:
Սեպտեմբերին Սուրբ Խաչ կուգայ,
Անկէ վերջն ալ Խաչ Վարագայ:

— Դեռ ուրիշ ի՞նչ տօներ գիտէք:

---

90. — ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Մեր պարտէզին ծայրը կայ տասը տանձի ծառ:

Տասը տանձի ծառին ծայրը տասը ծանր տանձ:

Ձեր պարտէզին ծայրն ալ կա՞յ տասը տանձի ծառ. տասը տանձի ծառին ծայրը տասը ծանր տանձ:

91. — ԾՈՒՂԱԿԸ

Շատ մը մկնիկներ միասին կը խաղայէին, անհոգ և ուրախ: Ունէին փայլուն գորշ մորթ և երկանկէկ պեխեր:

Առտու մը մման կանչեց զիրենք ու ըսաւ.

—Մտիկ ըրէք, ձագո՛ւկներս, ձեզի խրատ մը պիտի տամ: Մարդիկ մեզ կ'ատեն. տուներու մէջ կատու կը պահեն որ մեզ ուտէ, ծուղակ կը լարեն որ մեզ բռնէ: Զգո՛յշ կեցէք, չըլլա՛յ որ փորձանքի հանդիպիք: Փախէ՛ք մանաւանդ ծուղակներէն:

Մկնիկները խօսք տուին մամային խրատը պահելու:

Անոնցմէ մէկը որ միւսներէն աւելի անվախ էր, օր մը հեռացաւ քիչ մը իրենց ծակէն: Յանկարծ անկիւն մը աչքին հանդիպեցաւ ծուղակ մը: Ուզեց գիտնալ թէ ծուղակն ի՞նչ տեսակ բան մըն է. կամաց կամաց մօտեցաւ ու տեսաւ ծուղակին մէջ ապուխտի իւղոտ կտոր մը:

Իրաւ որ ապուխտը շատ անուշ կը հոտէր: Մկնիկը փափաքեցաւ աւելի մօտէն հոտոտել զայն, քիչ մըն ալ առաջացաւ, յե-

տոյ եւ գնաց, նորէն առաջացաւ և վերջապէս ապուխտին դպաւ։

Շրա՛խ... ծուղակը փակուեցաւ ու խեղճ մկնիկը բանտարկուեցաւ մէջը։

Ժամ մը վերջը տանտէրը եկաւ. բերաւ կատուն և բացաւ ծուղակին դուռը։

— Ի՞նչ բրաւ կատուն մկնիկին երբոր ծուղակը բացուեցաւ։

ՍՈՒՍԾ. — Կատուին խաղը մուկին մահն է։

---

90. — ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ՎԷՃԸ

Ախոռին մէջ միասին կանգնած էին եզը, կովը, ձին ու էշը։ Գիշեր մը ասոնք վէճի բռնուեցան իրարու հետ, թէ տէրը՝ իրենցմէ ո՛րն աւելի կը սիրէ։

— Ի հարկ է մեր տէրը ամէնէն աւելի զիս կը սիրէ, կ'ըսէր եզը, ե՛ս եմ որ անոր արտը կը հերկեմ, ցորենը կը կամնեմ, սայլը կը քաշեմ։ Եթէ ես չըլլայի, ան ի՞նչպէս պիտի ապրէր։

— Ո՛չ, ո՛չ, վրայ բերաւ կովը, մեր տէրը զի՛ս կը սիրէ ամէնէն աւելի. չէ՞ մի որ ես եմ որ կը դիեցնեմ ու կը մեծցնեմ քեզի պէս եղները։ Ու յետոյ ես տիրոջս կուտամ կաթ, մածուն, սեր ու կարագ և կը կերակրեմ անոր ամբողջ ընտանիքը։

— Կը սխալիք, ձայնեց անդիէն աշխոյժ ձին շփացած ձեւով մը, մեր տէրը զիս ձեզմէ աւելի կը սիրէ. չէ՞ք տեսներ թէ ան ի՞նչպէս զիս կը փայփայէ, ի՞նչպէս գեղեցիկ թամբով զիս կը զարդարէ, որովհետեւ ե՛ս եմ որ զինք իմ վրաս կը հեծցնեմ ու կը պտտցնեմ լեռ ու սար, դաշտ ու անտառ։

— Բարեկամներ, կանչեց անդիէն ականջը կախ իշուկը, մի՛ մոռնաք թէ մեր տիրոջը համար ամէնէն աւելի ես կ'աշխատիմ. ե՛ս եմ որ փայտ կը կրեմ անտառէն, ցորենը կը տանիմ ջաղացք ու ալիւրը կը բերեմ. ու դեռ ո՛ր մէկն ըսեմ. ըոպէ մը հանգիստ կեցած չունիմ. ո՛չ մէկդ ինծի չափ չարքաշ էք. մեր տէրը պէտք է որ ամէնէն աւելի զի՛ս սիրէ։

Շունը որ ախոռին դրան դուրսը պառկած էր, լսեց ներսի կենդանիներուն վէճը, և չկրնալով համբերել, ինք ալ խօսքի մէջ ինկաւ։

— Պարապ խօսքեր կ'ընէք, ըսաւ, ո՞վ չի գիտեր որ մեր տէրը ձեր բոլորէն աւելի գիս կը սիրէ, վասնզի գիշեր ցորեկ ե՛ս կը պահպանեմ անոր հօտերը, տունը և բոլոր հարստութիւնը։

Այդ պահուն տէրը վրայ եկաւ և իմաստալով վիճաբանութիւնը, ըսաւ.

— Իրարու հետ մի՛ վիճիք, դուք ամենքդ ալ ինծի հարկաւոր էք, ո՛չ մէկդ կրնայ ըստնել միւսին ըրածը. այդ պատճառաւ ես ձեզ ամենքդ ալ կը սիրեմ։

— Ի՞նչ ծառայութիւններ կ'ընեն մեզի այծը. ոչխարը, հաւը, սագը, ուղտը, գամէշը։

---

93. — ԼՈՒՍԻՆ ՊԱՊՈՒԿ

Նայէ՛, տղա՛ս, լեռան վրայ
Լուսին պապուկն է եղեր,
Երկինքն ի վեր կ'երթայ պայծառ,
Ոսկիէն գոյն է խլեր։
Եկո՛ւր, եկո՛ւր, լուսի՛ն պապուկ,
Մտի՛ր մանչուս ծոցը փափուկ։
Նայէ՛, մա՛նչը. լուսին պապուկ
Լոյս-երեսին կրս-կլլոր,

Ի՞նչ մանուրտիկ քիթ ու բերան
Աչկունք ունի ան աղուոր։
Եկո՛ւր, եկո՛ւր, լուսի՛ն պապուկ,
Մտի՛ր մանչուս ծոցը փափուկ։

Ա՛լ իմ մանչուս, լուսի՛ն պապուկ,
Մի՛ նայիր ծուռ ծուռ դէմքին,
Զէ՛, զաւակըս ա՛լ խելօք է,
Զըլլա՛յ ձրգես քար գլխին։
Եկո՛ւր, եկո՛ւր, լուսին պապուկ,
Մտի՛ր մանչուս ծոցը փափուկ։

Կանչէ՛, մա՛նչը, լուսի՛ն պապը,
Կանչէ՛ ձայնովդ անուշիկ.
Թո՛ղ վար իջնէ, ու իրարու
Տըւէ՛ք սիրոյ քիւր պաչիկ։
Եկո՛ւր, եկո՛ւր, լուսին պապուկ,
Մտի՛ր մանչուս ծոցը փափուկ։

Թափէ՛ վերէն, լուսի՛ն պապուկ,
Մանչուս շաս շաս խելք, շնորհ,
Որ իմաստուն, քարի ըլլայ
Ու հընազանդ միշտ իր մօր։
Եկո՛ւր, եկո՛ւր, լուսին պապուկ,
Մտի՛ր մանչուս ծոցը փափուկ։

ՀԱՆԵԼՈՒԿ 9. — Լեռան ետեւ կէս կաթայ։

---

94. — ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

Առտու է. պզտիկ տղաք դպրոց կ'երթան։ Երեք մանուկներ ալ դաշտը ելան պտըտելու, զբօսանք ընելու։ Այնտեղ տեսան տեսակ տեսակ սիրուն բզէզներ. որ բզզալով, բզզալով՝ ուրախ զուարթ կը թըռչէին օդին մէջ։

— Սիրո՛ւն բզէզներ, եկէ՛ք, մեզի հետ խաղացէք, ըսին մանուկները։

— Ո՛չ, ո՛չ, մենք գործ ունինք, մենք չենք կրնար ձեզի հետ խաղալ, ըսին բզէզները միաբերան, ու թռան, հեռացան։

Մանուկները գնացին, գնացին և խումբ մը մրջիւններ տեսան։

— Փոքրիկ մրջիւններ, եկէ՛ք, քիչ մը խաղա՛նք միասին։

— Ո՛չ, ո՛չ, մենք գործ ունինք, մենք ժամանակ չունինք խաղալու, մենք պաշար հաւաքելու վրայ ենք, ըսին մրջիւնները ու շարունակեցին ճամբանին։

Մանուկները նորէն քալեցին ու տեսան շատ թռչուններ, որ ճլուրլալով կը թռչէին վեր վար։

— Սիրելի՛ թռչնիկներ, եկէ՛ք, քիչ մը խաղա՛նք միատեղ, ըսին մանուկները։

— Ո՛չ, ո՛չ, մենք գործ ունինք, մենք մեր ձագերուն կեր կը տանինք, մենք չենք կրնար ձեզի հետ խաղալ, ըսին թռչունները, ու սուրացին շտապով։

Մանուկները քիչ մըն ալ քալեցին ու յանկարծ ծառերու վրայ տեսան սկիւռներ որ արագ արագ կը վազէին ոստոստելով։

— Փափկի՛կ սկիւռներ, եկէ՛ք, վա՛ր իջէք, քիչ մը խաղանք միատեղ, ըսին մանուկները։

— Ո՛չ, ո՛չ, մենք գործ ունինք, մենք ուտեստ պիտի ճարենք, մենք ժամանակ չունինք խաղալու, ըսին, սկիւռները, ու աւելի արագ փախան, գնացին։

Մանուկները նորէն առաջ քալեցին ու տեսան առուակ մը որ գիլգիլ կը հոսէր։

— Վճի՛տ առուակ, կեցի՛ր, քիչ մը խաղա՛նք միասին, ըսին մանուկները։

— Ո՛չ ո՛չ, ես գործ ունիմ, ես ժամանակ չունիմ ձեզի հետ խաղալու. բոյսեր, թուփեր, ծառեր ու ծաղիկներ ինծի կ'սպասեն։ Ինծի՛ կը սպասեն այծեր, ոչխարներ, ուլեր, գառնուկներ որ անուշ ջուրէս խմեն, զովանան։ Ինծի կը սպասեն ուրիշ առուներ. մենք իրարու կը միանանք, կը մեծնանք, ջաղացքի քարերը կը դարձնենք որ ձեզի

համար ալիւր պատրաստուի, ըսաւ առուակը ու շարունակեց գլգլալով հոսիլ։

Մանուկները տխրեցան. անոնք զարմացան թէ ինչո՞ւ ո՛չ մէկը չուզեր իրենց հետ խաղալ։

—Մանուկները ի՞նչ պարտէին ընել։

ԱՌԱՁ.—Ես աղա, դուն աղա, Ջաղացքն ո՞վ աղա։

95.— ՋԱՂԱՑՔԸ

Մեր գիւղին շաս մօտիկ՝
Ջաղացք մը կայ մենիկ.
Կը լսուի ամէն օր
Միակերպ իր ժխոր:
Ան գարի կամ ցորեն
Շարունակ աղալէն,

Կը դառնայ օրն ի բուն,
Ջայրագին, անընկուն:
Ջաղացպանն ու իր կին
Շաս բարի սիրտ ունին.
Ամէն մարդ անոնց քով
Կը գտնէ սէր, գորով:

ՀԱՆԵԼՈՒԿ 10.— Երկու սար, կը կրծեն գիրար:



96.— ՎԱԳՐՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Վագրը կատու տեսած չէր ամենեւին։ Օր մը կը հանդիպի կատուին ու կ'ըսէ։

—Քեռո՛րդի, դուն մեզմէ կը նմանիս, ինչո՞ւ այսչափ պզտիկ մնացեր ես։

Կատուն կ'ըսէ։

—Ա՜խ, մի՛ հարցներ, քե՛ռի, ադամորդին ձեռքն ինկողը ասանկ պզտիկ կը մնայ։

—Ո՛վ է դա ադամորդին, ցուցո՛ւր նայիմ, կ՚ըսէ վագրը։

Կատուն ալ կը տանի վագրը ու անոր կը ցուցնէ մարդ մը որ լեռը փայտ կը կտրէր։

Վագրը կը մօտենայ մարդուն ու կ՚ըսէ։

—Դո՞ւն ես ադամորդին, եկուր նայիմ, մէյմը հետդ մարտնչինք։

—Շա՛տ լաւ, մարտնչինք, կ՚ըսէ մարդը, բայց կը վախնամ որ կը փախչիս. մինչեւ որ երթամ, ուժս տունէն բերեմ, եկուր թաթդ սատեղ դի՛ր որ չփախչիս, կ՚ըսէ մարդը, ցոյց տալով ճեղքը կոճղին որուն զարկած էր կացինը։

—Չեմ փախչիր, կ՚ըսէ վագրը ու միամիտ կերպով թաթը կը դնէ ճեղքին մէջ։ Մարդը անմիջապէս անդիէն կացինը դուրս կը քաշէ ճեղքէն և վագրին թաթը կը սեղմուի կոճղին մէջտեղ։

Մարդը իսկոյն փայտ մը կ՚առնէ, ու կ՚սկսի սաստիկ ծեծել վագրը։

—Ամա՛ն, քեռո՛ւդի, աս ի՛նչ թակարդ էր որ ձգեցիր զիս. ողջ մնայի, հոգ չէր՝ քեզի

չափ մնայի, կ՚ըսէ վագրը, ողբագին մռընչելով։

—Վագրը ո՞ւր կը բնակի, կատուն՝ ո՞ւր։

ԱՌԱԾ.— Մե՛ծ կեր, մեծ մի՛ խօսիր։

97.— ՎԻՃԱԿԻ ԵՐԳ

Աս ի՛նչ կոնիկ մոնիկ է.
Եկեր իջեր մեր տունը.
Շարէ շապիկ հագեր է,
Քթան լաչկիկ ձգեր է,
Բակն արեւով լցեր է,
Մանուկ տղան տեսեր է,
Գնացեր, մօրկան ըսեր է,
Մօրկան խելքիկն անցեր է,
Խոչ մը մատաղ ըրեր է։
Քար գողնամ, խիճ գողնամ։
Եօրն աղբիւրէ ջուր գողնամ։



98.— ԳԱՅԼՆ ՈՒ ՄՕՐ ՎՐԷԺԸ

Գեղացի կին մը արտին մէջ կ'աշխատէր եր էրկանը հետ։ Իր փոքրիկ երախան ալ դրած էր արտին եզերքը ուր կը քնանար ան մշիկ, մշիկ։

Կէսօրին էրիկը իջաւ ձորը՝ ջուր բերելու համար։ Այդ պահուն անօթի գայլ մը յանկարծ դուրս եկաւ մօտակայ անտառէն և արտին եզերքէն երախան յափշտակեց, տարաւ։

Մայրը տեսաւ ու վազեց գայլին ետեւէն, վազեց, վազեց ու շունչը կտրած՝ կանգնեցաւ սարի մը գլուխը։ Այնտեղէն սկսաւ գայլին ետեւէն անէծքներ կարդալ։

—Անողո՛րմ գազան, կրողը տանի քեզ,

ո՞ւր կը տանիս երախաս, ա՛չքդ կուրնայ, տո՛ւնդ աւերի, գետինն անցնիս, անո՛ղորմ, չա՛ր...։

Այսպէս բաւական պոռալ-կանչելէ յետոյ՝ մայրը հանդարտօրէն դարձաւ արտը և յաղթական ձեւով մը էրկանն ըսաւ.

—Զար գայլը տարաւ երախան, բայց ես ալ վրէժս առի, ետեւէն խօսք չափեցի, խօսք չափեցի որ...։

99.— ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ

Հովտէն ի վար սար սա վայրենի
Ջուր մը զուլալ գիլ, գիլ կ'անցնի։
Թուխ մանուկ մը ափն է վազեր,
Ձեռքն ու երեսն է լըւացեր.
Լըւացեր է ձեռքն ու երես,
Դարձեր ջուրին է հարցուցեր։
— Դուն ո՞ր լեռնէն կուգաս, ջրի՛կ,
Ա՜յ իմ պաղո՛ւկ ջրիկ մեղրիկ։
—Ես կուգամ այն լեռնէն բարձրիկ
Որ ճին ու ճոր ձիւն կայ վրան,
—Դուն ո՞ր առուն կ'երթաս ջրի՛կ,
Ա՜յ իմ պաղո՛ւկ ջրիկ մեղրիկ։

—Ես կ'երթամ այն առուն գողտրիկ
Որուն ափերն են ծաղկալից:
—Դուն ո՞ր պարտէզ կ'երթաս, ջը՛րիկ,
Ա՜յ իմ պաղո՛ւկ ջրիկ մեղրիկ:
—Ես կ'երթամ այն պարտէզ խաղցրիկ
Ուր պլպուլը կ'երգէ այգուն:
—Դուն ո՞ր ծառը կը ջրես, ջը՛րիկ,
Ա՜յ իմ պաղո՛ւկ ջրիկ մեղրիկ:
—Ես կը ջրեմ այն ծառն աղուորիկ
Որուն տակն է մեծադալար:

100.— ՈՍԿԻԻՆ ՈՒ ԵՐԿԱԹԻՆ ՎԷՃԸ

Անգամ մը ոսկին ու երկաթը իրարու հետ վէճի բռնուեցան:

—Ես ամէնէն ընտիր մետաղն եմ, կ'ըսէր ոսկին, ամէնքը գիս կը սիրեն ու կը պաշտեն: Մարդիկ ինձմով շինած են դրամը, ինձմով կը շինեն գեղեցիկ շղթաներ, սիրուն մանեակներ, մատանիներ, օղեր և ուրիշ շատ աղուոր զարդարանքներ: Է՜հ, ի՜նչ երկարեմ, ես ամբողջ աշխարհը կրնամ գնել:

—Շատ մի՛ պարծենար, պատասխանեց երկաթը, իրաւ է թէ մարդիկ քեզի շատ ե-

ռես կուտան, բայց իմ ծառայութիւններէս ո՛չ մէկը կրնաս կատարել դուն: Տուն շինելու համար մարդիկ ոսկի կացինով չեն կըտրեր փայտը, ցորեն հասցընելու համար արտը ոսկի արօրով չեն հերկեր, տեսակ տեսակ մեքենաները ոսկիով չեն շիներ: Ու յետոյ եթէ մարդիկ ինձմով չշինէին բրիչը, ի՞նչպէս քեզ պիտի հանէին հողին տակէն:

Ոսկին ուզեց պատասխան տալ, բայց պատասխան չգտաւ:

—Ի՞նչով կը շինեն արօրը, բահը, կացինը, ուրագը, մուրճը, բրիչը, մեքենաները:

—Դեռ ուրիշ ի՞նչ մետաղներ գիտէք:

—Մետաղներն ո՞ւրկէ կը հանեն եւ ի՞նչպէս:

101.— ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԽԱՂՈՂԸ

Աղուէսը շատ վազեր ու յոգներ էր, շատ ալ ծարաւած էր։

Այդ պահուն այգիի մը քովէն անցնելով՝ տեսաւ բարձր սարփինայէն վրայ դեղին հասուն խաղողներ։

Սա խաղողէն քիչ մը ուտեմ, ըսաւ աղուէսը ու մօտեցաւ սարփինայէն։

Աղուէսը վեր ցատքեց, բայց չհասաւ խաղողին։ Նորէն ու նորէն ցատկեց, դարձեալ չկրցաւ հասնիլ։

Աղուէսին բերնին ջուրերը կը վազեր, սակայն ի՞նչ օգուտ. սարփինան շատ բարձր էր։

Այն ատեն աղուէսն ըսաւ։

—Դեռ խակ են այդ խաղողները, շատ թթու ըլլալու են. չեմ ուզեր ագոխ ուտել։

Ու գլուխը կախած՝ հեռացաւ գնաց։

ԱՌԱԾ.—Կատուն մոին չհասաւ, ըսաւ՝ հոտած է։

102.— ԵԼԱՆԻ ԳՆԱՑԻՆԻ

Ելանի, գնացինի Գալիլիա,
Գալիլիա ծով մը կար,
Ծովուն մէջ ծառ մը կար,
Ծառին վրայ բոյն մը կար,
Բոյնին մէջ հաւկիթ մը կար,
Հաւկիթին մէջ ձագ մը կար։
Ան ձագը անդանակ մորթեցին,
Անկրակ եփեցին,
Ով կերաւ՝ զարմացաւ,
Ով չկերաւ՝ հաթեցաւ։

103.— ԱՄՊ-ՄԱՅՐԻԿԸ

Ամպ-մայրիկը երկու խելօք աղջիկներ ունի և երկու ալ անառակ մանչեր։

Աղջիկներէն մին փոքրիկ քնքուշ էակ մըն է. անունն է Ցօղիկ։ Սա գարունին ու աշունին ամէն առտու գաղտնաբար կուգայ, պսպղուն մարգարիտներ կը շարէ տերեւներու, ծաղիկներու և խոտերու վրայ։

Ասոր քուրիկը կը կոչուի Ջիւնիկ։ Ա՛ս ալ ճերմակ բամպակ աղջիկ մըն է որ ձը-

մեռը, ցուրտը գալուն պէս՝ մէջտեղ կ'ելլէ, իր սպիտակ քօղը կը փռէ լեռներու, սարերու դաշտերու և անտառներու վրայ։

Ամպ-մայրիկին մանչերէն մին Անձրեւիկն է որ յաճախ կը ծեծէ մեր պատուհաններն ու տանիքները, ուժգին թափով կ'իյնայ գետին, հեղեղներ կը ձեւացնէ ու ամէն ինչ տակն ու վրայ կ'ընէ։ Բայց եթէ խելօք ատենին հանդիպի, կը թարմացնէ ծառերն ու բոյսերը, կը զովացնէ չորցած հողը։

Ամէնէն չարն է ասոր եղբայրը որ կը կոչուի Կարկուտիկ։ Սա խենդ Փոթորիկին հետ ընկերացած՝ կուգայ շատ անգամ, կը կոտրէ, կը թափէ, կը ջարդէ, կը փշրէ ինչ որ առջեւը հանդիպի, ապակի, ծառ, ճիւղ, բոյս, արտ և ուրիշ բաներ։

Ամպ-մայրիկը յաճախ կը սրդոզի իր անառակ մանչերուն, Անձրեւիկին ու Կարկուտիկին, իրենց այս չարութեանցը համար, և ահռելի որոտումներով, փայլատակումներով կը սասատէ զիրենք, բայց անոնք չեն խելօքնար, ու կը շարունակեն իրենց չարութիւնները։

—Ի՞նչ կը պատահի շատ անգամ անձրեւին ու կարկուտին հետ միասին։



104.— ԾԻԱԾԱՆԸ

Անձրեւէն ետք ամպերը սկսան ցրուիլ։ Անոնց տակէն Արեւը դուրս հանեց իր պայծառ դէմքը և երկինքի կամարին վրայ ձգեց իր գոյնզգոյն, նաշխուն Ծիրանի Գօտին։ Ծիածանն էր որ ծագեր էր։

Անիկա ա՛յնչափ գեղեցիկ, ա՛յնչափ շքեղ էր որ ամէն մարդ կանգնած՝ կը դիտէր զայն հիացումով։ Ծիածանը գոռոզացաւ և սկսաւ պարծենալ թէ ինք Արեւէն աւելի աղուորիկ է։

Արեւն ալ ըսաւ։

—Իրաւ է թէ գեղեցիկ ես, բայց մի՞թէ առանց ինծի կրնա՞ս ըլլալ։ չէ՞ որ ինձմէ եւլած ես։

Ծիածանը չուզեց հասկնալ և Արեւին վրայ ծիծաղեցաւ։

Արեւը բարկացաւ, մտաւ ամպերուն տակ, և Ծիածանն ալ անհետ եղաւ։

—Ե՞րբ կը ծաղի Ծիածանը, առանց Արեւի ծիածան կը ծաղի՞։



105. — ԳՈՒԹԱՆԵՐԳ

Առաւօտու ասղն երեւաց,
Բարիլուսու դուներն են բաց.
Բացուի բարով լուս-աղօթրան,
Հանեմ գութան, լծեմ սարուած։
Դէ՞հ, վեր կացէք, ժիր գոմեշներ,
Գութան երթանք, արս վարելու։
Մանկալ բարեւ տուաւ Աստծուն,
Գութան հասաւ արտին գլուխ,

Մանկալն ասաց. «Եա՜ Տէր Աստուած»։
Խոփն օձի պէս առաջ սողաց։

ԱՌԱՆ.— Մշա՛կ, քիչ խօսէ, չա՛տ ակօսէ։

---

106. — ԱՒԱԳ ՄԿՆԻԿՆ ՈՒ ԱՔԼՈՐ ԱՂԱՆ

Աւագ մկնիկ խաթունն ու աքլոր աղան ամուսնացան իրարու հետ։ Օր մը աքլորը դուրս ելաւ կեր ճարելու։ Մկնիկն ալ թոնիրը վառեց որ բան մը եփէ։ Մէյ մըն ալ թոնիրն ինկաւ բռնկեցաւ, ու ճղբը ճղբը այրեցաւ։

Իրիկուան աքլորը դարձաւ տուն. նայեցաւ որ մուկը թոնիրն ինկեր, այրեր է։ Լացաւ, լացաւ, գլուխին մոխիր ցանեց ու նստաւ։

Հեռուէն ճնճղուկ մը տեսաւ աքլորը ու հարցուց.

—Աքլո՛րիկ, ինչո՞ւ եղար մոխրաչփիկ։

Աքլորն ալ ըսաւ.

— Ա՜խ, աքլոր մոխրաչփիկ, աւագ մկնիկն ինկեր է թոնիր, եղեր է չստիկ-մստիկ։

Ան որ լսեց ճնճղուկը թափեց փետուրները և ծառի մը կատարը նստաւ։ Ծառը հարցուց.

—Ճնճո՛ւղիկ, ինչո՞ւ եղար թեւաթափիկ։

Ճնճղուկն ըսաւ.

—Ա՛խ, ճնճուղիկ թեւաթափիկ, աքլորիկ մոխրաչփիկ, աւագ մկնիկն ընկեր թոնիր, եղեր է չստիկ-մստիկ։

Ծառին ճիւղերը կոտրտեցան, թափեցան գետինը քարին վրայ։ Քարը հարցուց.

— Ծա՛ռիկ, ինչո՞ւ եղար ճղակոտոր։

Ծառն ալ ըսաւ.

—Ա՛խ, ծառիկ ճղակոտոր, ճնճուղիկ թեւաթափիկ, աքլորիկ մոխրաչփիկ, աւագ մկնիկն ընկեր թոնիր, եղեր է չստիկ-մստիկ։

Քարը գլորեցաւ, գնաց ընկաւ վտակը։ Վտակը հարցուց.

—Քարի՛կ, ինչո՞ւ եղար գլոր-մլոր։

Քարն ալ ըսաւ.

—Ա՛խ, քարիկ գլոր-մլոր, ծառիկ ճղակոտոր, ճնճուղիկ թեւաթափիկ, աքլորիկ մոխրաչփիկ, աւագ մկնիկն ընկեր թոնիր, եղեր է չստիկ-մստիկ։

Վտակին ջուրն իսկոյն արիւնի փոխուեցաւ։

Լուսանման աղջիկ մը կուժն ուսին՝ եկաւ վտակէն ջուր առնելու։ Երբոր տեսաւ որ ջուրն արիւնի փոխուեր է, հարցուց։

— Վտա՛կիկ ինչո՞ւ եղար արիւն-մարիւն։

Վտակն ալ ըսաւ.

—Ա՛խ, վտակիկ արիւն-մարիւն, քարիկ գլոր-մլոր, ծառիկ ճղակոտոր, ճնճուղիկ թեւաթափիկ, աքլորիկ մոխրաչփիկ, աւագ մկնիկն ընկեր թոնիր, եղեր է չստիկ-մստիկ։

Աղջիկը կուժը նետեց, կոտրտեց, ու տուն դարձաւ։ Տատը հարցուց։

—Ա՛ղջիկ, ինչո՞ւ կուժն ըրիր կտոր կտոր։

Աղջիկն ալ ըսաւ։

—Ա՛խ, տատիկ, աղջիկը կուժ կոտորկոտոր, վտակիկ արիւն-մարիւն, քարիկ գլոր-մլոր, ծառիկ ճղակոտոր, ճնճուղիկ թեւաթափիկ, աքլորիկ մոխրաչփիկ, աւագ մկնիկն ընկեր թոնիր, եղեր է չստիկ-մստիկ։

Տատը ցաւէն մօրուքը ածիլեց ու նստաւ դուռը։ Անդիէն մշակ մը անցաւ լուծքը ուսին, տեսաւ տատը ու հարցուց։

—Տա՛տիկ, ինչո՞ւ եղար մօրուք-ածելուկ։
Տատն ալ ըսաւ։

—Ա՜խ, տատիկ մօրուք-ածելուկ, աղջիկը կուժ կտոր-կտոր, վտակիկ արիւն-մարիւն, քարիկ գլոր-մլոր, ծառիկ ճղակոտոր, ճնճուղիկ թեւաթափիկ, աքլորիկ մոխրաչփիկ, աւագ մկնիկն ընկեր թոնիր, եղեր է չստիկ-մստիկ։

Մշակը կոտրեց լուծքը ու նստաւ, լացաւ։ Ամէն լսողները մեծ սուգ ըրին։ Ինչո՞ւ ինչ է պատահեր։

Մուկն է մեռեր։

107. — ԱՊՈՒՇԻՆ ՀԷՔԵԱԹԸ

Ժամանակին գեղի մը մէջ երկու եղբայրներ կային, մէկը խելօք՝ մէկալը՝ ապուշ։

Ապուշ եղբայրը ամէն տեսակ խենդութիւններ կ'ընէր տունին մէջ։ Խելօքը համբերութեամբ կը տանէր անոր բոլոր ըրածներուն։

Օր մը ապուշին խելքին փչեց որ եղբօրմէն զատուի։ Խելօքը ուզեց հակառակիլ, բայց խենդին ո՛վ կրնայ հակառակի՛լ։

Ապուշը՝ բաժնելու համար իրենց ունեցածը, խոշոր բիր մը առաւ ձեռքը, մըտաւ ախոռ և սկսաւ բոլոր կենդանիներուն զարնել։ Անասունները վեր վեր ցատկեցին և լեղապատառ դուրս փախան ախոռէն, մինակ ծեր կով մը մնաց որ տեղէն չէր կրնար շարժիլ։

Ապուշը փախչող կենդանիները եղբօրը բաժին թողուց, և ինք իրեն բաժին առնե-

լով ծեր կովը, տունէն դուրս ելաւ։ Գոհունակ սրտով՝ կովը խառնեց առջեւը և սկսաւ գեղը պտտիլ կովը ծախելու համար։ Բայց ծեր կովը ո՞վ կը գնէ։

Դուրս ելաւ գեղէն, ինկաւ լեռ, սար, քալեց անդադար՝ կովը մշտելով և երբեմն ալ պոռալով։

—Ծախո՜ւ կով, ծախո՜ւ կով, ո՞վ կ'առնէ...։

—Շատ գնաց, քիչ գնաց, տեսաւ որ յոպոպիկ մը իր բոյնին մէջ նստեր՝ կը կանչէ։

—Իպիպի՜կ, կուկուկո՜ւկ...։

Ապուշը ուրախութեամբ թռչունին մօտ գնաց և հարցուց։

—Դուն կ'առնե՞ս կովս։

—Իպիպի՜կ, ձայնեց թռչունը։

—Քանի՞ ոսկի կուտաս։

—Կուկուկո՜ւկ...։

—Ի՞նչ եօթը ոսկի։

—Իպիպի՜կ...։

—Քիչ մը աւելի չե՞ս տար։

—Կուկուկո՜ւկ...։

—Առ, եօթը ոսկի թո՛ղ ըլլայ, տուր փարան։

—Իպիպի՜կ...։

—Հիմա փարա չունի՞ս։

—Կուկուկո՜ւկ...։

—Տասնըհինգ օրէն կուտա՞ս։

—Իպիպի՜կ...։

—Թո՛ղ ըլլայ, տասնըհինգ օրէն կուգամ, փարան կ'առնեմ, ըսաւ ապուշը, և կովը հոն ձգելով՝ գեղ դարձաւ։

Խելօք եղբայրը երբոր լսեց պատահածը, շատ նեղացաւ, բայց ի՞նչ կրնար ընել։

Ժամանակը լրանալուն՝ ապուշը գնաց հոն՝ ուր ձգած էր կովը և տեսաւ որ կովուն միայն ոսկորներն են մնացեր. և անոնց վրայ հազար-համար թռչուններ թառեր՝ կը կոցեն շարունակ։

Քիչ մը անդին ալ յոպոպիկը նստած՝ նորէն կը կանչէ։

—Իպիպի՜կ, կուկուկո՜ւկ...։

—Ի՞նչ է այս, հարցուց ապուշը յոպոպին, մատա՞ղ ըրիր կովը։

—Իպիպի՜կ...։

—Տէրը ընդունելի ընէ. իմ փարաս տուր որ երթամ։

—Կուկուկո՛ւկ...։

—Նորէն փարա չունիս, ութ օրէն կուտա՞ս։

—Իպիպի՛կ...։

Աղէկ, ութը օրէն կուգամ, բայց եթէ նորէն չտաս փարաս, գլուխդ կը ջախջախեմ, սպառնաց ապուշը, և նորէն գեղ դարձաւ։

Ութ օր վերջ՝ դարձեալ գնաց յոպոպին և դրամն ուզեց։ Յոպոպը նորէն կանչեց իր սովորական իպիպիկ-կուկուկուկը։

— Վա՛յ անպիտան, կ'երեւի թէ դուն իմ փարաս պիտի ուտես, պոռաց ապուշը բարկութեամբ, և ձեռքին բրիչովը ուժգին հարուած մը իջեցուց վերէն վար։

Յոպոպը՝ թը՛ռ, թռաւ, և հարուածը հանդիպեցաւ քարի կտորի մը որ փշրուեցաւ ու անոր տակէն ոսկիներու տարափ մը՝ վազեց գետին։

—Տե՛ս, տե՛ս, ա՛յսչափ փարային վրայ նստեր՝ դիս կը խաղցընէ, չի տար դրամս, ըսաւ ապուշը, և գետինը թափած ոսկիներէն իր կովուն գինը՝ միայն եօթը ոսկի առնելով, դարձաւ գեղը։

Խելօք եղբայրը ապուշին ձեռքը հին, խոշոր, թանկագին ոսկիներ տեսնելով՝ զարմացաւ, և հարցափորձելով՝ հասկցաւ եղելութիւնը։

Երկու եղբայր միասին նորէն գնացին լեռը և հասկցան որ այնտեղ հնուց թաղուած գանձ մը կայ եղեր, և ապուշին բրիչը անոր հանդիպելով՝ մէջտեղ ելեր է գանձը։ Ժողվեցին գետինը ցանուած կարմրուկ ոսկիները, տոպրակներով բերին գեղը և աղուոր, աղուոր վայելելով՝ հանգիստ կեանք մը վարեցին։

ԱՌԱՔ.— Թենդին հացը, խելօքին փորը։

108. — ԳԻՒՂԻՆ ԱՌԱՒՕՏԸ

Ա՜խ, ես ո՛րքան կը սիրեմ գիւղին առաւօտը, լոյսը կը բացուի ու աքաղաղը իր թառին վրայէն կը պոռայ. կու-կու-լիկ-կու։ Իր ձայնին պատասխան կուտան մօտիկ գիւղի իր ընկերները։

Անուշ հովը, խաղալէ՛ն խաղալէ՛ն կ'անցնի, երերցնելով ծառերուն տերեւները։ Թռնիրները կը ծխան ու կապոյտ մուխը սի՛ւն սի՛ւն կը բարձրանայ օդին մէջ։

Կը լսուի ահա ժամուն զանգակը, թիքը-թաք, թիքը-թաք, թիքը-թաք։ Աղջիկները կուժը իրենց ուսը առած, աղբիւրը ջուրի կ'երթան։

Կովերը կը բառաչեն, ոչխարները կը մայեն, գոմէշները կը մկան, կը լծուին ու կը քաշեն սայլը։

Սայլին վրայ նստած է գեղացի մանուկը, կը յօրանջէ, և իր երկայն մահակով կը խթէ գոմէշներուն կողը՝ պօռալով։

—Հո՛, հո՛ սեւուկ, հո՛, պո՛զօ, ոտք վերցուր։

Հնձաւորները, մանգաղը անցուցած իրենց վզին, լուռ կը քալեն. խումբ խումբ, դէպի արտերը։ Կ'ամաչարեն, որպէսզի տաքը չսկսած, առտուան զով օդին, քաղեն իրենց քաղը և խուրձ դիզեն մինչեւ կէս օր։

Ահա արեւը ոսկիի պէս կը ցաթի՝ երկայն բարտիներու գագաթին վրայ, և կամաց կամաց սողալով վար կ'իջնէ։ Կը հաւաքուի նախիրն ալ, և հովիւը կը քշէ կովերն ու ոչխարները՝ դէպի արօտավայր։

Կամաց կամաց գիւղը կ'ամայանայ, տունը կը մնան միայն պառաւներն ու տանտիկինները։

Ի՜նչ գեղեցիկ է ամառուան առաւօտը գեղին մէջ։

109. — ԿԱՐԹԸ ԵՒ ՁԿՆԻԿՆԵՐԸ

Ձկնորսները կարթը իջեցուցեր էին ծովն ի վար. ասեղին ծայրն ալ աղուորիկ որդ մը դրեր էին։

Ձկնիկները՝ որդը տեսան թէ չէ, բերանին բացին և վազեցին վրան։ Ամենքն ալ կը նայէին որ առաջ հասնին և որդը իրենք լափեն։

Բայց մայր ձուկը կեցուց զանոնք։

Գոցեցէք բերաննիդ, ըսաւ անոնց, նախ հասկցէք թէ ի՞նչ է և վերջը կերէք։

— Մայր, ըսին ձկնիկները, աղուորիկ որդ մըն է, բարի մարդիկ վար իջեցուցեր են որ ուտենք։

Մայր ձուկը խնդաց իր պարզամիտ ձագերուն վրայ, և ըսաւ.

— Տղաքս, մարդիկ ձեզ սիրելնուն համար չէ որ վար իջեցուցեր են այս որդը։ Եթէ ուշադրութեամբ նայիք՝ պիտի տեսնէք որ որդը ասեղի մը անցուած է։ Կըլ-

լելնուդ պէս, ասեղը բերաննիդ պիտի մտնէ և ահա ձեզ վեր պիտի քաշեն։

— Բայց մեզ ի՞նչ պիտի ընեն, մայր։

— Պիտի ստկեն, տապակին մէջ պիտի դնեն և իւղով պիտի տապկեն։

— Ու տապկելէ վե՞րջը...

— Տապկելէ վերջ ալ փառաւոր մը պիտի ուտեն. ձեր փուշերն ալ փիսիկին պիտի տան որ ան ալ խնջոյքէն բաժին ունենայ։

Այս որ լսեցին, ձկնիկները շուտ շուտ փախան որդին քովէն։

— Ինչո՞ւ կը փախիք, եկէք, դեռ ըսելիք ունիմ։ Այս որդին մէկ կտորը կրնաք ուտել։ Մի դպչիք այն մասին որ ասեղին պլլուած է, բայց անկէ վար երկարող մասը զգուշութեամբ կրնաք փրցնել և ուտել։

Յետոյ, մայր ձուկը թեւովը ցոյց տուաւ ուտելիք մասը։ Ձկնիկները փրցուցին այդ կտորը և աղուոր մը կերան։

Զկնորսները դեռ կ'սպասեն որ ձուկ բռնեն։

Կարթը միշտ լեցուն վար կ'իջնէ և պարապ վեր կ'ելլէ։

Զկնիկները ազատեցան, որովհետեւ հնազանդեցան իրենց մօրը։

ՎԵՐՋ

ՑԱՆԿ

	Էջ
1. Իմ գիրքս (ոտանաւոր) հեքեւողութիւն Յ. Գ.	3
2. Օրուան պահերն ու ժամերը	4
3. Աքաղաղ (ոտանաւոր) Գամար Քաքիպա	5
4. Շնորհիկն ու չնիկը	6
5. Փոքրիկ գպրոցականը (ոտանաւոր) Յ. Գ.	7
6. Զբաղեալ մանուկներ	7
7. Մանկիկը թռչնիկին (ոտանաւոր) Ա. Ն. Խ.	8
8. Ծոյլ Խորէնը	9
9. Ծոյլ Աղջնակը (ոտանաւոր) հեքեւողութիւն	10
10. Նաչխուն թիթեռնիկը Յ. Գ.	10
11. Բարի Անահիտը	11
12. Գոյները (ոտանաւոր) Յ. Գ.	12
13. Շարթուան օրերը Յ. Գ.	12
14. Արփիկին պուպրիկը (ոտանաւոր) հեքեւողթ. Յ.Գ.	13
15. Հարցում մը. ժողովրդական	14
16. Ձիակ, ձիակ (ոտանաւոր) ժողովրդական	15
17. Ակնոցը, հեքեւողութիւն	15
18. Ո՞վ ո՞վ ... (ոտանաւոր) հեքեւողութիւն Յ. Գ.	16
19. Խելօք գլուխը	17
20. Հայրիկը (ոտանաւոր) հեքեւողութիւն Յ. Գ.	18
21. Գրիգորիկն ու կովերը բարգմանութիւն	19
22. Հրեշտակն ու մանկիկը (ոտանաւոր) Գ. Մինասեան	20
23. Արձագանգը. հեքեւողութիւն	20
24. Օրօրերգ (ոտանաւոր) ժողովրդական	21
25. Ճնճղուկին բոյնը	22
26. Մայրիկը	23
27. Անուններ (ոտանաւոր) Յ. Գ.	24
28. Փոքրիկ Սուրէնը. հեքեւողութիւն	25
29. Փիսիկ, փիսիկ (ոտանաւոր) հեքեւող.	26

Էջ
30. Գէշ սովորութիւն. «Ծաղիկ» մեկ. հանդէս 27
31. Մարմնի անդամները (ոտանաւոր) հեսեւող. Յ. Գ. 27
32. Վերէն ու վարէն. հեսեւողութիւն 29
33. Արտուտիկ (ոտանաւոր) ժողովրդ. 30
34. Կռուող քոյրեր 31
35. Սագիկ, սագիկ (ոտանաւոր) 32
36. Նորածին Գեսիկը ժողովրդ. Յ. Գ. 33
37. Աստղիկին երազը բրգմ. 34
38. Պառաւին հաւը 35
39. Ուլիկներ (ոտանաւոր) հեսեւող. 35
40. Թափթփած Յակոբը 36
41. Կոկիկ Նուարդը (ոտանաւոր) հեսեւող. Յ. Գ. 37
42. Քաջ եղջերուն 38
43. Մեր տան եաւ (ոտանաւոր) ժողովրդ. 39
44. Անկեղծութիւն. բարգմ. 39
45. Գզաիկ չարաճճին (ոտանաւոր) 40
46. Պարտէզին մէջ հեսեւող. 41
47. Պուպլատիկինը (ոտանաւոր) ժողովրդ. 42
48. Առիւծն ու գորտը 43
59. Բուսիկը (ոտանաւոր) 43
50. Աստուան ճառագայթները. հեսեւող. 44
51. Մանուշակ (ոտանաւոր) Դոդոխեան 47
52. Մանուկը արեւին. հեսեւող. 48
53. Գիշեր բարի (ոտանաւոր) հեսեւող. Յ. Գ. 49
54. Ճշմարտախօս Տիգրանը։ «Ծաղիկ» մեկ. հանդէս 50
55. Ընտանի կենդանիները (ոտանաւոր) հեսեւող Յ.Գ. 51
56. Երկու մուկեր 52
57. Պղտաէր աղջիկը (ոտանաւոր) 53
58. Լալկան Մինասը բրգմ. 54
59. Մեր ժամը (ոտանաւոր) 55
60. Երկու խազընկերներ 56

Էջ
61. Թռուցիկը (ոտանաւոր) Սստեան Վրդպ. 57
62. Ագռաւին խրատը 58
63. Կաղանդ պապան (ոտանաւոր) 59
64. Աղուէսին ուխտը. Ժողովրդ. 60
65. Նոր տարին ու աղքատները (ոտանաւոր) «Ծաղիկ» 61
66. Շնիկն ու փիսիկը. բրգմ. 62
67. Խելօք Դաւիթին կովը, ժողովրդ. 63
68. Զատիկ (ոտանաւոր) 64
69. Անհոգ աղան 64
70. Մեղու (ոտանաւոր) Գ. Քաբիպա 65
71. Յաջող որսորդութիւն, ժողովրդ. Յ. Գ. 66
72. Զորս եղանակ (ոտանաւոր) Գ. Քաբիպա 68
73. Օձն ու գիւղացին 69
74. Տարուան ամիսները (ոտանաւոր) Գ. Քաբիպա 70
75. Արեւ քուրիկն ու լուսին աղբարիկը, ժողովրդ. 71
76. Ծառիկ (ոտանաւոր) Արինգ 72
77. Խնձորենիին այցելուները, հեսեւող. 73
78. Գարուն (ոտանաւոր) «Ծաղիկ» մեկ. հանդէս 74
79. Անտառին մէջ. հեսեւող. 75
80. Առուակ (ոտանաւոր) Զոկ 76
81. Աքլորին զրոյցը. ժողովրդ. «Բիւրակն» հանդէս 77
82. Երեք ձուկերը. բրգմ. 79
83. Նաւը (ոտանաւոր) 81
84. Զարաճճի քամին, հեսեւող. 81
85. Եկեղեցին չորս կողմերը (ոտանաւոր) Յ. Գ. 83
86. Պապուկին հանելուկը, ժողովրդ. 84
87. Բազիկը (ոտանաւոր) Գ. Քաբիպա 86
88. Մաման ու անծեղը. ժողովրդ. «Բիւրակն» 87
89. Տօնի օրեր (ոտանաւոր) Էմմ. ֆեն. 89
90. Շուտասելուկ. ժողովրդ. 90
91. Ծուղակը. բրգմ. 91

		Էջ
92.	Կենդանիներու վէճը. հեքեւող.	92
93.	Լուսին պապուկ (ոտանաւոր) Յ. Գ.	94
94.	Մանուկները դաշտին մէջ, հեքեւող.	96
95.	Ջաղացքը (ոտանաւոր)	98
96.	Վագրն ու կատուն, ժողովրդ.	99
97.	Վիճակին երգը (ոտանաւոր) ժողովրդ.	101
98.	Գայլն ու մօր վրէժը, ժողովրդ.	102
99.	Մանուկն ու ջուրը (ոտանաւոր) ժողովրդ. Յ. Գ.	103
100.	Ոսկիին ու երկաթին վէճը	104
101.	Աղուէսն ու խաղողը	106
102.	Եւանք գնացինք, ժողովրդ.	107
103.	Սմբ մայրիկը, հեքեւող.	107
104.	Ծիածանը	109
105.	Գուլթաներգ (ոտանաւոր) ժողովրդ.	110
106.	Սւադ մկնիկ ու աքլոր աղան ժողովրդ. Բիւրկ.	111
107.	Ազուշին հէքեաթը	115
108.	Գիւղին առաւօտը (ոտանաւոր) ժողովրդ.	120
109.	Կարթը եւ ձկնիկները	122

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Թիւ	1	Աքաղաղ
»	2	Շաբթուան եօթն օրերը
»	3	Բերան, ականջ, աչք
»	4	Հաւկիթ
»	5	Նուշ
»	6	Օձ
»	7	Տարուան 12 ամիսները
»	8	Արեւ
»	9	Լուսին
»	10	Աղօրիք

ՀՀ Ազգային գրադարան
NL0792751

I
692

ԳՐԱՏԱՆՍ ՍԵՓԱԿԱՆ ՀՐ[illegible]Ր

	Դ.Ր.
Քերական *Հին ոճով*	5
» *Նոր պատկ.*	5
» *Մանկապարտ. պատ. ձեռագիր օրինակով*	5
Ծիածան *Ա. մայրենի լեզու Յ. Գազանճեան*	25
Ծիածան *Բ.* » » » »	25
Ծիածան *Գ.* » » » »	40
Քերականութիւն *Տրրկ. պատկ.* »	25
» *Միջին* » »	60
» *Բարձր և լրացուցիչ* »	100
Գանձարան *Տրրկ. պատկ. Ա. Անտոնեան*	30
» *Միջին* » » »	50
» *Բարձր* » » »	125
Թուաբանութիւն *Տարրկ. Գալաֆեան*	35
» *Միջին* »	65
» *Բարձր առանց տոմարակալութեան Գալաֆեան*	150
» *Բարձր. Տոմարակալութիւն և երկրաչափութիւն Գալաֆեան*	225
Աշխարհագրութիւն *Տար. Մանճեան Պատկերազարդ*	50
Նոր Դասագիրք Հայոց Պատմութեան *Տրրկ. Պատկերազարդ Կ. Յ. Բասմաջեան*	25
Նոր Դասագիրք Հայոց Պատմութեան *Միջին Բ. Կ. Յ. Բասմաջեան*	40
Դուն պիտի բլլաս *Միջին Դ. Խաչկոնց*	50
» » » *Բարձր մանչոց Դ. Խաչկոնց*	60
» » » *Աղջկանց* » »	60
Քերական Դր. Հայ *Պատկ. Թերզեան*	15
» Անգլ. Հայ *Մուրատեան*	25

ԳԻՆ 30 ՂՐՇ